

Շրջակա միջավայրի վրա ազդեցության Նախնական գնահատման հայտ

Տավուշի մարզ, Դիլիջան համայնք Թեղուտ բնակավայրի Պարզ
լիճ փողոց թիվ 1 հասցեում նախատեսվող հանգստի գոտու

Պատվիրատու՝

Քաղաքացի Արթուր Տիգրանյան

<<Էկո Գրուպ ԱՄ>> ՍՊԸ

Տնօրեն՝ Ա.Մինասյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն.....4

1.2 Հապավումներ.....4

1.3 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը5

1.4 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)9

 1.4.1 Նախատեսվող գործունեության նկարագիր.....9

 1.4.2 Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածքը13

 1.4.3 Նախատեսվող աշխատանքների կազմակերպում.....22

 1.4.4 Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ22

 1.4.5 Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ.....23

Նախատեսվող գործունեության տարածք շինհրապարակի կազմակերպման հատակագիծ ..25

 1.4.6 Կադրային ապահովում և շինտեխնիկա.....26

 1.4.7 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում28

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ29

 1.4.8 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում շահագործման փուլ29

 1.4.8.1 Խմելու-տնտեսական կարիքներ ջրապահանջի հաշվարկ.....29

 1.4.8.2 Ոռոգման և ջրցանման կարիքների համար ջրապահանջի հաշվարկը30

 1.4.8.3 *Լողավազան.....30*

 1.4.8.4 *Մաքրման կայան.....30*

2.ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՄԱՆ32

2.1 ՖԻԶԻԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.....32

2.2 ՋՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....33

2.3 ԿԼԻՄԱՆ.....35

2.3.1 Օդերևութաբանական-կլիմայական պայմանները35

2.3.2 Ընդհանուր ֆոնային կլիմայական բնութագիրը36

2.4 Օդային ավազան.....43

2.5 Հողերի նկարագիրը44

2.6 Հիմնային աշխատանքներ.....44

2.7 Անտառ45

2.8 Կենսաբազմազանություն47

2.8.1 Բուսական աշխարհ.....47

2.8.2 Կենդանական աշխարհ48

2.9 Բուսական աշխարհի պահպանության միջոցառումներ49

2.9.1 Կենդանական աշխարհի պահպանության միջոցառումներ50

3.0 Թափոնների կառավարում51

- 4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ԸՆԴՈՒՅՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....52
- 4.1 ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ52
- 4.2 ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ.....53
- 4.3 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ53
- 4.3.1 ՄԹՆՈԼՈՂՈՐՏԱՅԻՆ ՕՂ.....53
- 4.3.2 ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ54
- 4.3.3 ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ54
- 5. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ55
- 6. ԱՂՍՈՒԿԻ և ԹՐԹՌՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆ57
- 7. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ.....58
- ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....59
- ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ62
- ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....25
- ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ26

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1	Ձեռնարկողի մասին տեղեկություն	
1.2	Ձեռնարկող՝	Քաղաքացի Արթուր Տիգրանյան
1.3	Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝	Երևան, Գևորգ Չաուշի փողոց 11/1
1.4	Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝	Երևան, Գևորգ Չաուշի փողոց 11/1
1.5	Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝	Տավուշի մարզ քաղաք Դիլիջան

1.2 Հապավումներ

- ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն
- ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն
- ՄՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
- ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.3 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Հանգստի գոտու նախագիծը նախատեսվում է իրականացնել Տավուշի մարզի, Դիլիջան համայնքի Թեղուտ բնակավայրի Պարզ լիճ փողոց թիվ 1 հողամաս հասցեում:

Գործունեության նպատակն է կառուցել ժամակակից հանգստի գոտի:

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է փորձաքննության ենթակա գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Հանգստի գոտու աշխատաքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է նախատեսվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները, բնապահպանական ազդեցության գնահատման շրջանակը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Նախատեսվող գործունեության կազմակերպումն իրականացվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության (օրենքների և ենթօրենսդրական ակտերի) այն պահանջներով, որոնք առնչվում են շրջակա միջավայրի պահպանության և մասնավորապես նախատեսվող գործունեության կարգավորման հետ: Դրանցից հիմնականներն են՝

1. ՀՀ Հողային օրենսգիրք (02.5.2001թ.),
2. ՀՀ Ջրային օրենսգիրք (04.6.2002թ.),
3. «Թափոնների մասին» ՀՀ օրենք (24.11.2004 թ.),
4. «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենք (07.02.2012թ.),
5. «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (01.11.1994թ.),
6. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (21.06.2014թ),
7. «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (11.04.2005թ),
8. «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք (30.05.2001թ),
9. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2 – III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին»
10. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 25 հունվարի 2010թ. N 01-Ն հրաման «Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին»
11. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 17 մայիսի 2006 թվականի N 533-Ն հրաման «Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին»
12. «Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված եվ սահմանափակումների ենթակա ապրանքների ցանկերը հաստատելու, լիազոր մարմիններ սահմանելու եվ ապրանքների արտահանման եվ

(կամ) ներմուծման լիցենզիաների ու թույլտվությունների տրամադրման շրջանակային կարգը հաստատելու մասին»>> ՀՀ կառավարության 25.12. 2014 թ-ի N 1524-Ն որոշում,

13. <<Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված եվ սահմանափակումների ենթակա որոշ ապրանքների ցանկերը, ապրանքների արտահանման եվ ներմուծման լիցենզիայի եվ հայտի ձեւերը հաստատելու, որոշ ապրանքների արտահանման եվ ներ-մուծման լիցենզիաների տրամադրման առանձնահատկությունները սահմանելու եվ Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 15-ի N 327-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»>> 05.02.2015 թ-ի N 90-Ն որոշում,

14. ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N 121-Ն որոշում,

15. ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի «Արտադրության և սպառման թափոնների տեղադրման և վնասազերծման անվտանգ պայմանների ուղեցույցին հավանություն տալու մասին» N16 արձանագրային որոշում,

16. ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին» N 430-Ն հրաման:

17. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.),

18. «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.),

19. «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.),

20. « կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին « կառավարության 29.01.2010թ.–ի N 71-Ն որոշում,

21. « բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին « կառավարության 29.01.2010թ.–ի N72-Ն որոշում,

22. « կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում,

23. «կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և

օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ա որոշում,

24. «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը հատատելու մասին» ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշումը:

1.4 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.4.1 Նախատեսվող գործունեության նկարագիր

Տարածքը գտնվում է Տավուշի մարզ, համայնք Դիլիջան, գյուղ Թեղուտ, Պարզ լիճ փողոց թիվ 1 հողամաս հասցեում: Էսքիզային նախագիծը կատարվել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N27112019-11-0033 վկայականի, պատվիրատու Հերմինե Հովհաննիսյանի առաջադրանքի հիման վրա:

Տարածքը ունի ռելիեֆի փոքր թեքություն, մասամբ՝ կտրուկ վայրէջքներ: Տարածքի հիմնական մասը բացատ է, մյուս մասը՝ ծառապատ տարածքներ: Մուտքը՝ հյուսային կողմից:

Էսքիզային նախագծով նախատեսվում է տարածքում կառուցել հանգստի գոտի, որը ներառում է

1. Հանգստյան տներ (քոթեջներ)
2. Հյուրանոցային մասնաշենք
3. Ռեստորանային համալիր
4. Լողավազան
5. Վարչական մասնաշենք
6. Հանգստի գոտու սպասարկման համար նախատեսված այլ ենթակառուցվածքներ՝ ենթակայաններ, ռեզերվուարներ, կաթսայատուն, ըստ անհրաժեշտության:

Տարածքում մասնաշենքերի տեղակայումը մշակված է հաշվի առնելով կառույցների միջև ֆունկցիոնալ կապը, հրդեհային անվտանգության, հասարակական կառուցապատման նորմատիվային պահանջները: Տարածքի մուտքը նախատեսվում է հյուսիսային հատվածից:

Մուտքին կից նախատեսվում է վարչական շենքը՝ որում տեղակայված է ընդունարանը, և ավտոկայանատեղեր: Կենտրոնական հատվածում նախատեսված է ռեստորանային համալիրը՝ խոհանոցով և անհրաժեշտ սպասարկման տարածքներով: Արևմտյան հատվածում նախատեսվում է հյուրանոցային համալիրը և լողավազանի մասնաշենքը, որոնք հնարավոր է կապել միմյանց ներքին անցումներով: Տարածքի ներքում նախատեսվում են հիմնականում հետիոտն անցումներ, տրանսպորտային մշտական երթևեկություն չի նախատեսվում: Հողամասի պարագծով նախատեսվում է տրանսպորտային մոտեցում հանգստյան տներին, հյուրանոցային մասնաշենքին, լողավազանի մասնաշենքին՝ ապահովելով հրդեհային անվտանգության և հարմարավետ սպասարկման պահանջները: Էսքիզային նախագծով ապահովված են կառույցների միջև նորմատիվային հեռավորությունները: Կառուցապատումից ազատ տարածքներում նախատեսվում է բարեկարգում, կանաչապատում, ջրային գոտիների իրականացում, ճարտարապետական փոքր ձևերի (նստարաններ, աղբամաններ, տաղավարներ, լույսիաղբյուրներ, մանկական խաղահրապարակներ, ծառուղիներ, կամրջակներ և այլն):

Տարածքի կառուցապատման և շահագործման համար նախատեսվող էլեկտրամատակարարման օգտագործվող հզորությունը կազմում է 320կՎԱ, սնուցող ցանցի լարումը՝ 6.00ԿՎ:

Տարածքում նախատեսվում է ջրավազան 425լիմ ծավալով:

1. Հանգստյան տներ (քոթեջներ): Հանգստյան տները նախատեսվում են տարածքի հարավային հատվածում: Նախատեսվում է կառուցել 4 տեսակի տներ՝ "Ա" (մեկ ննջարանով, 6 հատ), "Բ" (երկու ննջարանով, 6 հատ), "Գ" (երեք ննջարանով, 5 հատ), "Դ" (չորս ննջարանով, 4 հատ): Ընդհանուր առմամբ նախատեսվում է 20 հանգստյան տուն: "Ա" և "Բ" տեսակի տները նախատեսվում են միահարկ, "Գ" և "Դ" տեսակի տները՝ երկհարկանի (մեկ լիարժեք և մեկ մանսարդային հարկեր): Կախված ռելիեֆի առանձնահատկություններից՝ հնարավոր է նախատեսել կիսանկուղային կամ նկուղային հարկեր: Տների կից նախատեսվում է առանձնացված բակային տարածքներ, կրակարան, հնարավոր է նախատեսել ամառային խոհանոց, բաց լողավազաններ և այլ ճարտարապետական փոքր ձևեր:

2. Հյուրանոցային մասնաշենք: Հյուրանոցային մասնաշենքը նախատեսվում է եռահարկ: Առաջին հարկում նախատեսվում է հասարակական սպասարկման համար նախատեսված տարածքներ, երկրորդ և երրորդ հարկերում նախատեսվում են հյուրանոցային համարներ: Հարկերը միմյանց հետ կապված են աստիճանավանդակներով և վերելակներով:

3. Ռեստորանային համալիր: Համալիրը նախատեսվում է տարածքի կենտրոնական հատվածում: Նախատեսվում է խոհանոցային հատված, բացօթյա տարածքներ ջրավազանով և կրակարանով, փակ սրահ: Միահարկ կառույց է, ելնելով ռելիեֆի առանձնահատկություններից՝ հնարավոր է նախատեսել նկուղային կամ կիսանկուղային հարկ: Հնարավոր է նախատեսել անտրեստլային հարկ, ճարտարապետական առանձնահատկություններից ելնելով՝ հնարավոր է մասնակի իրականացնել երկրորդ հարկ, հարթ շահագործվող տանիք:

4. Լողավազան: Նախատեսվում է տարածքի արևմտյան հատվածում, հյուրանոցային համալիրին կից: Կառույցը նախատեսվում է ճարտարապետական հորինվածքի առանձնահատկություններից ելնելով՝ հնարավոր է մասնակի իրականացնել անտրեստլային հարկ, երկրորդ հարկ: Ներառում է սպասարկման համար անհրաժեշտ բոլոր տարածքները (հանդերձարաններ, ցնցուղարաններ, սանհանգույցներ, շոգեբաղնիքներ, բար և այլն):

5. Վարչական մասնաշենք: Վարչական մասնաշենքը նախատեսվում է տարածքի մուտքին կից: Նախատեսվում է եռահարկ կառույց: Առաջին հարկում նախատեսված է ընդունարանը, այցելուների սպասարկման համար անհրաժեշտ օժանդակ տարածքներ (սպասարահներ, կրպակներ, բուժկետ և այլն): Երկրորդ և երրորդ հարկերում նախատեսվում են աշխատասենյակներ, անձնակազմի աշխատանքների կազմակերպման նախատեսված այլ օժանդակ տարածքներ:

6. Ճանապարհ: Տարածքի մուտքը նախատեսված է Պարզ լիճ փողոցից: Դեպի հողատարածք տանող ճանապարհը գրունտային է, ունի մոտ 950.0մ երկարություն և Հաշմանդամ և Բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժվելու համար համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմի նախատեսված են թեքահարթակներ:

4.0մ լայնություն: Գրունտային ջրերի հեռացման ոչ ճիշտ կազմակերպման պատճառով ճանապարհը մասնակի վնասված է և դժվարանցանելի:

Նախագծով նախատեսվում է վերանորոգել և բարեկարգել ճանապարհը՝ կազմակերպելով ջրահեռացում:

Ճանապարհը կարիք ունի փոսալցման աշխատանքների, տոփանման ու հարթեցման:

7. **Ջրագիծ:** նախատեսվող ջրագծի երկարությունը կազմում է մոտ 350մ, ջրագծի խրամուղին իրականացվելու է ձեռքի աշխատանքով՝ քանդելով 50սմ խորությամբ խրամուղի, անցկացվելու է 100մ տրամագծով խողովակ և կիրականացվի հողի հետ լիցք (աշխատանքերը կիրականացվեն ներգրավելով ազգային պարկից մասնագետի՝ կենսաբազմազանությանը նվազագույն վնաս հասցնելու նպատակով):

ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

- Մեկ ննջարանով քոթեջների կառուցապատման մակերես - 50.0քմ x 6 հատ = 300.0 քմ;
- Երկու ննջարանով քոթեջների կառուցապատման մակերես-70.0քմ x 6 հատ = 420.0քմ;
- Երեք ննջարանով քոթեջների կառուցապատման մակերես- 95.0քմ x 5 հատ = 475.0 քմ;
- Չորս ննջարանով քոթեջների կառուցապատման մակերես-120.0քմ x4 հատ = 480.0 քմ;
- Հյուրանոցային մասնաշենքի կառուցապատման մակերես - մոտ 600.0 քմ, 3 հարկ;
- Լողավազանի մասնաշենքի կառուցապատման մակերես - մոտ 800.0 քմ, 1 հարկ; (Լողավազան-1 հատ, չափերը 10մx25մx1.7մ, 425 խմ)
- Ռեստորանային մասնաշենքի կառուցապատման մակերես - մոտ 400.0 քմ, 1 հարկ;
- Վարչական մասնաշենքի կառուցապատման մակերես - մոտ 300.0 քմ, 3 հարկ;

Տեխնիկատնեսական ցուցանիշներ

- Հողատարածքի մակերեսը - 3.03 ՀԱ (30.300 քմ)
- ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍ-մոտ 3800.0 քմ (12.54%),
- Ավտոկայանատեղերի քանակ - 120 մեքենա -1500քմ (4.95%),
- Ճեմուղի, ճանապարհ և այլ -1900քմ (6.27%):
- Կանաչապատում – 23100քմ - (76.24%),

Օժանդակ կառույցները, ինժեներական ենթակառուցվածքներով պայմանավորված այլ մասնաշենքերի առակայությունը ներառյալ կառուցապատումը համաձայն նախագծման թույլտվության հնարավոր է նախատեսել մինչև 25%, ինչը ապահովված է

Նախատեսվում է տարածքի պարագծով իրականացնել ցածր ցանկապատ ցանցի և փայտի համադրությամբ և տնկել մագլցող բույսեր ստանալով կանաչ պարիսպ:

- Հողամասի նպատակային նշանակությունը՝ հատուկ պահպանվող տարածքներ,
- գործառնական նշանակությունը՝ հանգստի համար նախատեսված:
- գրանցված իրավունքի տեսակը՝ ընդհանուր համատեղ սեփականություն:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Տարածքում կիրականացվի սիզամարգի ցանքս կտկվեն ծառեր և թփեր:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն:

Շրջանի սեյսմիկ և սեյսմատեկտոնական պայմանները

Համաձայն ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկունության շինարարության նախագծման նորմեր»-ի ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի ուսումնասիրվող տարածքը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում, արագացման առավելագույն մեծությունը՝ $A_{max}=0,4g$ և ունի 8-9 բալ սեյսմիկայնություն:

1.4.2 Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածքը

Իրականացված աշխատանքների հիման վրա տեղամասի ինժեներա-երկրաբանական կառուցվածքում առանձնացվել են գրունտների հետևյալ տարատեսակերը՝


Համաձայն կատարված ուսումնասիրությունների, արխիվային նյութերի տվյալների՝


(նախկինում լաբորատոր ուսումնասիրման հիման վրա) ուսումնասիրվող տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են հետևյալ գրունտերը վերևից-ներքև:

Շերտ-1 Ավազակավեր շագանակագույն թույլ խոնավ պինդ թանձրությամբ, խճի, մանրախճի պարունակությամբ 10-15%:

Դեյուվիալ-պրոյուվիալ առաջացումներ են: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն СНиП IV-5-82-ի III կարգ է:

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածաշրջանում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա: Ջրառատ են Աղստև գետի ողողահունի և Սպիտակաջուր, Հաղարծին գետերի արտաբերման կոների այլուվիալ նստվածքները: Հետազննվող տարածքում ըստ արխիվային տվյալների գրունտային ջրերը գտնվում են խորը հորիզոններում:





ԳՐԱՏՈՒՄ ԿԱԴԱՏՐԱԿԱՆ ՔԱՐՏԵԶ

Հորատման իրապիճակագրի բնագծագիր Մ 1:2000





ՀԱՏԱԿԱԳԾԻ ՄԻՆԵՄ ԱՌԱՋՈՐԿՈՂ ՏԱՐԲԵՐԱԿ

ՀՈՂԱՄԱՍԻ ԻՐԱՂԻԱԿԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ
 Մ 1:10000
 ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ ՏԱԿՈՒԾԻ ՄԱՐԶ, ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆԷ,
 ՊԱՐԶ ԼՃԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 1 ՀԱՄՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ
 ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏՈՒ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԱՌԱՋԱՂԻՆՔ

ՏՐԱՄԱՂԿՈՒՄ Է ԿԱՌՈՒՑՄԱՊԱՏՈՂ՝ **ԱՐԹՈՐ ՏԻԳՐԱՆՅԱՆԻ ԵՎ ԱՆԻ ԱԲԳՈՐՑԱՆԻ,**
 ԽՃԵՆԵՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՀԻՄՆԱՂՎԵՐԻՑ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ
 ՍՏԱՆԱՈՒ ՀԱՄԱՐ




ՀԵՌԱԽՈՍԱԿԱՊ



Քաղաքաշինության և հողօգտագործության
 բաժնի պետի պաշտոնատեղում
 Երևան, Կաթողոսյան

Բաղկացած է 1 էջից

Տավուշի մարզ
Թեղուտ համայնք
Հատված կադաստրային քարտեզից
Կադաստրային ծածկագիր՝ 11-029-0219-0002
Մասշտաբ 1: 2000



	Կոորդինատներ	
	X	Y
1	8493627.8665	4513190.4250
2	8493596.1154	4513195.4522
3	8493545.3173	4513223.3762
4	8493513.8173	4513216.8651
5	8493461.2496	4513145.9141
6	8493469.2468	4513110.6441
7	8493464.0104	4513079.6050
8	8493457.1852	4513028.4938
9	8493466.9682	4512991.7179
10	8493475.5965	4512956.4562
11	8493499.4717	4512928.5682
12	8493501.4357	4512926.8789
13	8493517.8631	4512941.2357
14	8493529.5541	4512939.5584
15	8493540.7459	4512971.6555
16	8493544.3253	4513019.9710
17	8493585.8956	4513088.6769
18	8493612.2314	4513114.6478
19	8493634.3276	4513144.4032



սպասարկման գրասենյակ

Դիմող՝ Ուֆանել Հարությունյան

Տրամադրված տեղեկատվությունը՝

21.05.2021թ.
(տրման ամսաթիվը)

Զ/Զ	Սարգ	Համայնք, քաղաք, գյուղ, վարչական շրջան	Ծածկագիր	Կադաստրային քարտեզ		Շրջադարձային կետերի կոորդինատներ		Տպագրված թերթեր	
				Միավորի քանակը	Արժեքը (դրամ)	քանակը	Արժեքը (դրամ)	քանակը	Արժեքը (դրամ)
1	Տավուշ	Թեղուտ	0219-0002	1	100	19	1900	1	300

Վճարման ենթակա գումարի չափը՝

2300 դրամ

Տեղեկատվությունը տրամադրվում է Կադաստրի կոմիտեի Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի կողմից:

Սպասարկման գրասենյակ



Շինարարական մոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակացույց

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է համաձայն (N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում կետ 111, 113) ՍՆԻՊ 1.04.03-85* մաս II, հետև հիման վրա հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը: Օբյեկտի ընդհանուր կոմպլեքսի շինարարության նորմատիվ տևողությունը ծրագրվում է 48,0 ամիս կամ 4 օրացուցային տարի շինարարական աշխատանքների կատարման համար թույլատրման տրամադրման օրվանից:

ՇԻՆ. ՄՈՆԻՏԻՆԳԻՆ ԱՃԻՎԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ԸՍՏ ԱՃԻՎԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵՍԱԿԻ																																																
ԱՃԻՎԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ՄՈՒՋԻՆ ՏԱՐԻ												ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ												ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ												ԶՈՐՈՐԴ ՏԱՐԻ											
	ԱՄԻՍՆԵՐ												ԱՄԻՍՆԵՐ												ԱՄԻՍՆԵՐ												ԱՄԻՍՆԵՐ											
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
ՇԻՆԱՐԱՊՈՒԿԻ ԿԱՏԱՐՎՈՒՄ	[Gantt chart bars for 2021]																																															
ՋՈՒՑԻՆ ԱՃԻՎԱՏԱՆՔՆԵՐ	[Gantt chart bars for 2021]																																															
ՔՈՑԵՆԵՐ	[Gantt chart bars for 2021]																																															
ԶԻՍՔԵՐԻ ՊԱՏՈՎԱՏՈՒՄ	[Gantt chart bars for 2021]																																															
ԵՐ ԿԱՐԿԱՆԻ ԻՐԱՎԱՅՈՒՄ	[Gantt chart bars for 2021]																																															
ՏԱՆԻՔԻ ԻՐԱՎԱՅՈՒՄ	[Gantt chart bars for 2021]																																															
ԱՐՏԱՔԻՆ ՊԱՏԵՐԻ ԸՄԿՎՁԵՐՆԵՐ ԵՐԵՍՊԱՏՈՒՄ	[Gantt chart bars for 2021]																																															
ՄԻՋՆՈՐՆԵՐ	[Gantt chart bars for 2021]																																															
ԱՆԿՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԿՈՑՈՐԴՈՒ ՄՈՆԻՏԻՆԳ	[Gantt chart bars for 2021]																																															
ԳՈՐԿԱՐՄԱՆ ԱՃԻՎԱՏԱՆՔՆԵՐ	[Gantt chart bars for 2021]																																															
ՈՆՏՈՐԱՆԱԿԻ, ՄԱՍՆԱՇԵՆՔ	[Gantt chart bars for 2021]																																															
ԶԻՍՔԵՐԻ ՊԱՏՈՎԱՏՈՒՄ	[Gantt chart bars for 2021]																																															
ԵՐ ԿԱՐԿԱՆԻ ԻՐԱՎԱՅՈՒՄ	[Gantt chart bars for 2021]																																															
ՏԱՆԻՔԻ ԻՐԱՎԱՅՈՒՄ	[Gantt chart bars for 2021]																																															
ԱՐՏԱՔԻՆ ՊԱՏԵՐԻ ԸՄԿՎՁԵՐՆԵՐ ԵՐԵՍՊԱՏՈՒՄ	[Gantt chart bars for 2021]																																															
ՄԻՋՆՈՐՆԵՐ	[Gantt chart bars for 2021]																																															
ԱՆԿՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԿՈՑՈՐԴՈՒ ՄՈՆԻՏԻՆԳ	[Gantt chart bars for 2021]																																															
ԳՈՐԿԱՐՄԱՆ ԱՃԻՎԱՏԱՆՔՆԵՐ	[Gantt chart bars for 2021]																																															
ԼՈՂԱՎՁՅԱՆԻ ՄԱՍՆԱՇԵՆՔ	[Gantt chart bars for 2021]																																															
ԶԻՍՔԵՐԻ ՊԱՏՈՎԱՏՈՒՄ	[Gantt chart bars for 2021]																																															
ԵՐ ԿԱՐԿԱՆԻ ԻՐԱՎԱՅՈՒՄ	[Gantt chart bars for 2021]																																															
ՏԱՆԻՔԻ ԻՐԱՎԱՅՈՒՄ	[Gantt chart bars for 2021]																																															
ԱՐՏԱՔԻՆ ՊԱՏԵՐԻ ԸՄԿՎՁԵՐՆԵՐ ԵՐԵՍՊԱՏՈՒՄ	[Gantt chart bars for 2021]																																															
ՄԻՋՆՈՐՆԵՐ	[Gantt chart bars for 2021]																																															
ԱՆԿՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԿՈՑՈՐԴՈՒ ՄՈՆԻՏԻՆԳ	[Gantt chart bars for 2021]																																															
ԳՈՐԿԱՐՄԱՆ ԱՃԻՎԱՏԱՆՔՆԵՐ	[Gantt chart bars for 2021]																																															
ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍՆԱՇԵՆՔ	[Gantt chart bars for 2021]																																															
ԶԻՍՔԵՐԻ ՊԱՏՈՎԱՏՈՒՄ	[Gantt chart bars for 2021]																																															
ԵՐ ԿԱՐԿԱՆԻ ԻՐԱՎԱՅՈՒՄ	[Gantt chart bars for 2021]																																															
ՏԱՆԻՔԻ ԻՐԱՎԱՅՈՒՄ	[Gantt chart bars for 2021]																																															
ԱՐՏԱՔԻՆ ՊԱՏԵՐԻ ԸՄԿՎՁԵՐՆԵՐ ԵՐԵՍՊԱՏՈՒՄ	[Gantt chart bars for 2021]																																															
ՄԻՋՆՈՐՆԵՐ	[Gantt chart bars for 2021]																																															
ԱՆԿՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԿՈՑՈՐԴՈՒ ՄՈՆԻՏԻՆԳ	[Gantt chart bars for 2021]																																															
ԳՈՐԿԱՐՄԱՆ ԱՃԻՎԱՏԱՆՔՆԵՐ	[Gantt chart bars for 2021]																																															
ԳՅՈՒՂԱՆՈՋԱԿԻ, ՄԱՍՆԱՇԵՆՔ	[Gantt chart bars for 2021]																																															
ԶԻՍՔԵՐԻ ՊԱՏՈՎԱՏՈՒՄ	[Gantt chart bars for 2021]																																															
ԵՐ ԿԱՐԿԱՆԻ ԻՐԱՎԱՅՈՒՄ	[Gantt chart bars for 2021]																																															
ՏԱՆԻՔԻ ԻՐԱՎԱՅՈՒՄ	[Gantt chart bars for 2021]																																															
ԱՐՏԱՔԻՆ ՊԱՏԵՐԻ ԸՄԿՎՁԵՐՆԵՐ ԵՐԵՍՊԱՏՈՒՄ	[Gantt chart bars for 2021]																																															
ՄԻՋՆՈՐՆԵՐ	[Gantt chart bars for 2021]																																															
ԱՆԿՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԿՈՑՈՐԴՈՒ ՄՈՆԻՏԻՆԳ	[Gantt chart bars for 2021]																																															
ԳՈՐԿԱՐՄԱՆ ԱՃԻՎԱՏԱՆՔՆԵՐ	[Gantt chart bars for 2021]																																															
ՔԱՎՁԱԿԻ ՏԱՐԱԾՔԻ ԶՈՐԴՅՈՒՅՄԱՆ ԿԱՅՆԱԿՓՈՒՄ	[Gantt chart bars for 2021]																																															
ՏԱՐԱԾՔԻ ԶՈՐԿՎՈՒՄ ԵՎ ԿԱՆԱԾՊԱՏՈՒՄ	[Gantt chart bars for 2021]																																															
ՇԻՆԱՐԱՊՈՒԿԱՆ ԱՐՔԻ ՏԵՐԱՓՈՒՂՈՒՄ	[Gantt chart bars for 2021]																																															
ԱՎԱՐՑԱԿԱՆ ԱՃԻՎԱՏԱՆՔՆԵՐԻ ՓԱՍՏԱՊՆԵՐԻ ԿԱՅՆՈՒՄ	[Gantt chart bars for 2021]																																															

1.4.3 Նախատեսվող աշխատանքների կազմակերպում

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շինմոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Բոլոր տիպի շինմոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից:

Շինհրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից տրված հրահանգներով:

Շինհրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ գերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:

Հետիոտների անվտանգությունը ապահովելու նպատակով շինհրապարակը անհրաժեշտ է ցանկապատել թիթեղով:

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում:

1.4.4 Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ

Շինարարությունը ենթադրվում է իրականացնել կապալային եղանակով: Գլխավոր կապալառու կազմակերպությունը որոշվելու է մրցույթով:

Քոթեջների միացումը արտաքին ինժեներական ցանցերին կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Քոթեջների, հյուրանոցի, հրապարակների և մայթերի կառուցումը կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունը կարելի է իրականացնել ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և

մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, վարձակալել դրանք այլ կազմակերպություններից:

Ժամանակավոր շինությունների, վերամբարձ կռունկի, պահեստավորման մակերեսների տեղակայումը պատկերված է շինարարական գլխավոր հատակագծի վրա:

Առաջարկվում է հնարավորինս օգտագործել գույքային շարժական շինություններ:

Ժամանակավոր շինությունների ցանկը և դրանց տեղակայումը ցանկալի է լրացուցիչ ճշտվեն տեղում և համաձայնեցվեն պատվիրատուի հետ:

1.4.5 Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շաղախը և բետոնը կառաքվեն Դիլիջան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի աշխատանքների անընդհատությունը:

Առաջարկվում է շինարարության նյութատեխնիկական մատակարարման հետևյալ սխեման.

- Առանձին ամրանային ձողերը և հիմնակմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով բերվում են անմիջականորեն շինարարական հրապարակ, որտեղ կատարվում է դրանց պահեստավորում և տեղադրում,
- Բետոնային խառնուրդը միաձույլ բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների համար, ինչպես նաև շաղախը շարվածքի համար առաքվում են անմիջապես շինհրապարակ ավտոբետոնախառնիչներով և շաղախատարներով,
- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումը իրականացվելու է շինհրապարակից դուրս մասնագիտացված կետերում: Տարածքում քայուղեր և վառելանյութ չի պահեստավորվելու :

Շինարարությունը կիրականացվի մասնագիտացված կազմակերպության կողմից :

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1. Աշխատանքների բնույթից ելնելով՝ բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

2. Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի, աշխատանքների ընդհանրացված փուլի, կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

3. Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների, աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ


1. Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ), համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն), սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան

2. Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

3. Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

4. Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման, հրահանգման ժամանակին և որակով անցկացման, անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

Նախատեսվող գործունեության տարածք շինհրապարակի կազմակերպման հատակագիծ



1.4.6 Կադրային ապահովում և շինտեխնիկա

Շինարարությունում աշխատողների ընդհանուր թիվը՝ 20մարդ, որից

Ինժիներատեխնիկական անձնակազմ - 3 մարդ

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է ստորև:

Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ

Դ/Դ	ԱՆՎԱՆՈՒՄԸ	Մակնիշ	Քան,	Ճանաչություն
5	Էքսկավատոր Hyundai	170W	6	կամ համարժեք
6	Բուլդոզեր KOMATSU	D37-EX-22	3	կամ համարժեք
7	Ավտովերամբարձ կոունկ	KC-55713-5B	8	կամ համարժեք
8	Ավտոբետոնախառնիչ	СБ-69Б	3	կամ համարժեք
9	Ինքնաթափ ավտոմոբիլ	KAMA3 55111	2	կամ համարժեք
10	Էլ. եռակցման սարք	СТН 500	20	կամ համարժեք
11	Շարժական կոմպրեսոր	3ИФ-55В	1	կամ համարժեք

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը կիրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ մասնագիտացված սպասարկման կետերում:

1.4.7 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ եւ այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ եւ կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր եւ այլն: Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի եւ ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաեւ շինարարական անձնակազմի խմելու եւ կենցաղային նպատակների համար:

a) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\text{խ.տ.}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 3 մարդ

N– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n₁– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 17 մարդ

N₁ – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 խմ.օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 1440 օր

$$W_{\text{խ.տ.}} = (3 \times 0.016 + 17 \times 0.025) \times 1440 = 681 \text{ խմ/շին. ժամ.}:$$

b) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U_1 = S_1 \times K_1 \times T, \text{ որտեղ՝}$$

S₁ – ջրվող տարածքի մակերեսը, 500 քմ,

K₁ – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 խմ,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 1440

$$U_1 = 500 \times 0.0015 \times 1440 = 1080 \text{ խմ/շին. ժամ.}:$$

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 1761 խմ/շին. ժամ:

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

Հանգստի գոտու կոմունալ-կենցաղային նպատակով ջրամատակարարումը կիրականացվի տարածքի մոտակայքում գտնվող աղբյուրից, որի համար սահմանված կարգով ՇՄ նախարարությունից կստացվի ջրօգտագործման թույլտվություն:

Ներքին ցանցերը մոնտաժվում են պոլիպրոպիլենե խողովակներից:

Արտաքին ցանցը մոնտաժվում է պոլիէթիլենային խողովակներից:

ԿՈՅՈՒՂԻ

Կենցաղային հոսքերը սանիտարատեխնիկական սարքավորումներից ինքնահոս խողովակներով հեռացվում են նախագծվող արտաքին ցանցի մեջ և արտաքին ցանցի միջոցով ուղվում են դեպի մաքրման կայան: Ներքին և արտաքին ցանցերը անցկացվում են պոլիմիլիթրոբիդային կոյուղու խողովակներից:

ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի և կնքված պայմանագրի:

1.4.8 Նյութերի և բնատեսույթների օգտագործում շահագործման փուլ

1.4.8.1 Խմելու-տնտեսական կարիքներ ջրապահանջի հաշվարկ

Խմելու տնտեսական կարիքների համար խմելու որակի ջրի հաշվարկը կատարվում է՝

$$W_{\text{խմ.տնտ.}} = n \cdot N \cdot T \text{ քանաձևով, որտեղ՝}$$

n - 1 հանգստացողի համար ջրի ծախսի նորման է՝ 120 լ,

N - հանգստացողների քանակը՝ 100 մարդ,

T – Հանգստի գոտում ապրելու ժամանակը տարվա կտրվածքով՝ 365 օր:

$W = n \times N \times T = 120 \times 100 \times 365/1000 = 4380$ խմ/տարի կամ 12 խմ/օր, հաշվի առնելով ծանրաբեռնվածության գործակիցը $12 \times 0.7 = 8.4$ խմ/օր:

Օգտագործման ընթացքում ջրի անվերադարձ կորուստը կազմում է ≈ 12 %:

Մկոր. = $8.4 \times 0.12 = 7.4$ խմ/օր կամ 0.65 խմ/ժամ:

Կենսաբանական մաքրման կայան ուղղվող հոսքաջրերի քանակը կկազմի՝ 0.65 խմ/ժամ:

Լողավազանի ծավալը կազմում է 425 խմ: Լողավազանի ջուրը կենթարկվի ուլտրամանուշակագույն ճառագայթներով ախտահանման և մեխանիկական մաքրման համապատասխան ֆիլտրացիոն համակարգով: Ջուրը կփոխվի տարին մեկ անգամ:

1.4.8.2 Ոռոգման և ջրցանման կարիքների համար ջրապահանջի հաշվարկը

Ջրի ծախսը 1 քառ.մ կանաչ տարածքի ջրման համար՝ n

n_1 ՝ գազոններ - 3 լ

Կանաչ տարածք (S)՝ 12120,

ջրման օրական հաճախականությունը (K)՝ 1 անգամ,

ջրման օրերի թիվը տարվա կտրվածքով (N)՝ 30 օր:

Ջրապահանջը կկազմի՝

$$W_{\text{ոռ. ջրց}} = (n_1 \times S_1) \times K = (3 \times 12000) / 1000 \times 1 = 36 \text{ լամ/օր}$$

$$W_{\text{ոռ. ջրց}} = 36 \times 30 = 1080 \text{ լամ/տարի}$$

Ոռոգման ջրցանման համար ջուրն ամբողջությամբ օգտագործվում է անվերադարձ:

1.4.8.3 Լողավազան

Լողավազանի ծավալը կազմում է 425 խմ: Լողավազանի ջուրը կենթարկվի ուլտրամանուշակագույն ճառագայթներով ախտահանման և մեխանիկական մաքրման համապատասխան ֆիլտրացիոն համակարգով: Ջուրը կփոխվի տարին մեկ անգամ: լողավազանի ջուրը ամբողջությամբ կօգտագործվի ոռոգման նպատակով:

1.4.8.4 Մաքրման կայան

Կենցաղային կեղտաջրերը սանիտարական սարքերից ինքնահոս հավաքվում և հեռացվում են ներքին ցանցի միջոցով դեպի կոյուղու բակային ցանց: Կոյուղու բակային ցանցը նախատեսված է միացնել 1 հատ կեղտաջրերի մաքրման կենսաբանական կայանի, որը կապահովի ոռոգման ջրի համար հաստատված նորմերը: Հանգստի գոտու շրջակայքում կեղտաջրերի հեռացման կոլեկտոր չկա:

Ցանցերի վրա նախատեսված են դիտահորեր ստուգումներ կատարելու և հետագա շահագործելու համար:

Համաձայն մաքրման կայանի անձնագրային տվյալների մաքրված ջրերը համապատասխանում են ձկնատնտեսական ջրամբարների նորմերին և համապատասխան վնասազերծումից հետո կարող են օգտագործել նաև ոռոգման նպատակով:

Հարկ է նշել, որ ոռոգման շրջանում մաքրված ջրերը օգտագործվելու են միայն ոռոգման նպատակով:

Ինչպես նշվեց նախորդ ենթաբաժնում կեղտաջրերի առավելագույն օրական ծավալը նախատեսվում է 7.4 խմ/օր:

Նմանատիպ տեխնիկական ցուցանիշներով կայան է հանդիսանում <<Տոբա-50>> տեսակի մոդուլային կենսաբանական մաքրման կայանը, սակայն պատվիրատուն իր հայեցողությամբ կարող է տեղադրել նաև նմանատիպ կամ ավելի լավ ցուցանիշներով մաքրման կայան: Նախատեսվում է տեղադրել «Տոբա-50» տիպի մաքրման կայան:

Առաջարկվող մաքրման կայանի արտադրողականությունը ըստ տեխնիկական պարամետրերի կազմում է 9 խմ/օր , որը նաև հաշվի է առնվել որոշակի հավելումով:

Աղտոտվածության ցուցանիշների և աղտոտող նյութերի քանակները հաշվարկված են յուրաքանչյուր հանգստացողի համար առաջացող աղտոտվածության տվյալների (ՇՀԽՍ – 2.04.01 – 85, աղյուսակ 25) և կեղտաջրերի օրական քանակի հիման վրա:

№	Ցուցանիշի անվանումը	Աղտոտող նյութեր, գ/օր	Կոնցենտրացիա, մգ/լ
1.	Կախված նյութեր	1850	250
2.	ԹԿՊլրիվ	1531.06	206.9
3.	Կապված ազոտ (ամոնիումի աղերի)	185	25
4.	Ֆոսֆատներ	37	5
5.	Մակերեսային ակտիվ նյութեր (ՊԱԲ)	95.46	12.9

Կայանի մաքրման արդյունավետությունը համապատասխանում է ձկնատնտեսական ջրամբարների պահանջներին:

Մաքրման կայանի տեղադիրքը ներկայացված է գլխավոր հատակագծի վրա:

«Топас-50» կենցաղային կեղտաջրերի մաքրման կայանը (ՄԿ) նախատեսված է տնտեսական կենցաղային կեղտաջրերի վնասազերծման համար: Կայանը ապահովում է մաքրման այնպիսի աստիճան, որը նախատեսված է Մակերեսային ջրերը աղտոտումից պահպանելու սանիտարական նորմերով (ГОСТ 25298-82) և ՇՆ և Կ-40-03-99 ու ՇՆ և Կ 2.04.03-85 «Ջրահեռացում Արտաքին ցանցեր և կառույցներ»:

Կայանը համապատասխանում է ՌԴ ՏՊ-4859-002-54899623-2003 պահանջներին: Կայանի բոլոր մասերը, որոնք շփման մեջ են գտնվում կեղտաջրերի հետ, պատրաստված են չժանգոտող կայուն նյութից՝ պոլիպրոպիլենից, որն ապահովում է դրանց աշխատանքի երկարակեցությունը (ոչ պակաս քան 50 տարի):

Տարածքում նաժատեսվում է նաև հոր մաքրված ջրերի ավելցուկը պահելու՝ ռոռզման, և այլ նպատակներով օգտագործման համար: Համաձայն տեխնիկական անձնագրի էջ 23 բերված տվյալների վերջնական մաքրումից հետո հոսքաջրերում աղտոտող նյութերի պարունակությունը չի գերազանցում հետևյալ ցուցանիշները:

Անվանում	Չափման միավոր	Վերջնական մաքրումից հետո
Կախված մասնիկներ	Մգ/լ	3.0
ԹԿՊ	Մգ/լ	2.0
Կապված ազոտ	Մգ/լ	0.39
Ֆոսֆատներ	Մգ/լ	0.05
Մակերեսային ակտիվ նյութեր (ՊԱԲ)	Մգ/լ	0.1

2. ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ

2.1 ՖԻԶԻԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Թեղուտ, գյուղ Հայաստանի Տավուշի մարզում, մարզկենտրոնից 28 կմ հարավ-արևմուտք, Դիլիջան-Իջևան ճանապարհի վրա, Աղստև գետի ձախափնյակում: Գյուղի մակերեսը 9,5 կմ քառակուսի է: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1550 մ:

Բնակչությունը 2012թ դրությամբ կազմում է 1434մարդ, բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ և բանջարեղենի մշակությամբ:

Հետազոտվող տարածքը գտնվում ՀՀ Տավուշի մարզ, Դիլիջան համայնք, գ. Թեղուտ Պարզ լիճ փողոց, թիվ 1 հողամասի տարածքում:

Հետազոտվող տարածքը գտնվում է Աղստև գետի միջին հոսանքում և աչքի է ընկնում բարդ երկրաբանական կառուցվածքով:

Նախատեսվող տարածքը իրենից ներկայացնում է բացատ, որի որոշակի հատվածներում առկա է ծառաթփային բուսականություն: Տարածքում առկա է «Դիլիջան» Ազգային պարկին բնորոշ ծառաթփային բուսականություն: Կառուցապատումը իրականացվելու է բացառապես ազատ հատվածներում բացառելով ծառերի հատումը կամ վնասումը: Տարածքը անմիջապես հարակից է «Դիլիջան» Ազգային պարկին: տարածքի պարագծով նախատեսվում է ճեմուղի:

Մորֆոստրոկտուրային տեսանկյունից ուսումնասիրվող տարածքը համարվում է Դիլիջանի իջվածքի հյուսիսային թևի մասը, որն իրենից ներկայացնում է Դիլիջանի գրաբենի հյուսիսային լանջը՝ ունենալով դեպի հարավ նշանակալի թեքություն:

Ուսումնասիրվող տարածքի հյուսիսային մասը սահմանափակվում է Աղստև գետի հյուսիսային վերողողահունային դարավանդներով: Տեղանքի ժամանակակից ռելիեֆի միջին թեքությունը կազմում է 150-250: Տարածքում լայն տարածում ունեն սողանքավտանգ տեղամասերը:

Տարածքի գեոմորֆոլոգիական բնութագիրը հիմնականում պայմանավորված է Աղստև գետի հովիտով, որի կառուցվածքը սիմետրիկ է և ունի մոտ ութ դարավանդներ: Առաջին դարավանդը զբաղեցնում է գետի ափային մասը (ողողադաշտը) և ունի մինչև 1մ բարձրություն: Երկրորդ դարավանդի բարձրությունը գետի մակարդակից բարձր է մոտ 10-15 մ, երրորդ, չորրորդ և հինգերորդը համապատասխանաբար ունեն 20-40, 40-60 և 60-80 մ բարձրություններ:

Երկրաբանական պայմանները. ուսումնասիրվող տարածքը պատկանում է Կրասնոսելսկ-Դիլիջան սինկլինալային գոտուն, գտնվում է Ձկնագետ-Ֆիոլետովո-Վերին Չիչխան անտիկլինալից հյուսիս և հանդիսանում է Շիրակ-Սևան սինկլինորիումի խոշոր կառուցվածքային տարրերից մեկը:

Մինկլինալի առանցքային գիծն ունի հյուսիս-արևմտյան տարածում:

Երկրաբանական կառուցվածում (վերնից ներքև) հանդիպում են չորրորդական և ժամանակակից գետային նստվածքներ: Առաջին հերթին դրանք դարավանդային նստվածքներն են, որոնք զբաղեցնում են գետահովտի տարածքը:

Ավելի խորը հանդիպում են երրորդական (եոցենի) հասակի հրաբխածին ապարներ, որոնք ներկայացված են հիմնականում տուֆաբրեկչիաներով, անդեզիտներով և պորֆիրիտներով: Այստեղ լայն տարածում ունեն այդ ապարների փոփոխված, հողմնահարված և ճեղքավոր տարատեսակները:

Ուսումնասիրված տեղամասում ավելի խորքային ապարները Ադստև-Բլդրան գետերի ջրբաժան հատվածներում ներկայացված են ինտրուզիվ ապարներով, որոնք հատում են էոցենի հրաբխածին համալիրը և ներկայացված են պորֆիրիտներով նրանց տուֆերով և տուֆաբրեկչիաներով:

Տեկտոնական տեսանկյունից ուսումնասիրված տարածքն ունի բավականին բարդ կառուցվածք:

Առանձին մասնագետներ նշում են, որ Ադստև գետի ուսումնասիրված հատվածը պատկանում է լայնածավալ սինկլինալի և կազմված է հիմնականում էոցենի հրաբխածին ապարներից: Փաստերի առկայությունը, ինչպիսիք են հին դարավանդների տեղակայումը համեմատաբար բարձր նիշերի վրա, առանձին տեղերում հին թաղված լճային նստվածքները (որոնք տեղակայված են թաղված գոգավորություններում) թույլ են տալիս անել եզրահանգում տեղամասի զգալի տեկտոնական շարժումների վերաբերյալ:

Դրանք տեղի են ունեցել հիմնականում չորրորդական ժամանակահատվածում: Շրջանում հայտնի է նաև զգալի խախտումների համալիր ցանց, որի հիմնական ուղղությունը հանդիսանում է հյուսիս-արևմուտք - հարավ-արևելք ուղղությունը:

2.2 ՋՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ադստևը տարածքով հոսող ամենախոշոր գետն է: Այն սկիզբ է առնում Փամբակի լեռնաշղթայի հյուսիսային լանջերին: Սկզբում մի փոքրիկ առվակ է, սակայն Դիլիջանի մոտ հորդանալով դառնում է ջրառատ գետ: Մնվում է գերազանցապես ձնհալքից և անձրևաջրերից: Վտակներից հայտնի են Գետիկը և Ոսկեպարը, որոնցից առաջինը հոսում է Միափորի և Արեգունի լեռների միջև ընկած կիրճով: Խորությունը մեծ չէ, սակայն վարարումների ժամանակ դառնում է խիստ վտանգավոր:

Երկարությունը 133 կմ է, այդ թվում Հայաստանում 99 կմ: Ջրի ծախսը՝ 8,22 խմ/վ, հոսքը 256 միլիոն խմ:

Մինչև Գետիկ վտակին խառնվելն այն հոսում է հարավ-արևելյան ուղղությամբ, սակայն ապա փոխում է իր ուղղությունը դեպի հյուսիս-արևելք, հատում հանրապետության սահմանը և խառնվում Կուր գետին: Ադստևի ամենախոշոր վտակը՝ Գետիկը, հոսում է հարավ-արևելյան ուղղությամբ:

ՀՀ տարածքում Աղստևի վրա կառուցված է Բերքաբերի ջրամբարը, իսկ գետի ստորին հոսանքում՝ Աղստևի ջրամբարը:

Գետերը պատկանում են Կուր գետի ավազանին: Հարուստ գետային ցանցը տարածաշրջանի նշանավոր առանձնահատկությունն են: Գետերն ու գետակները տիպիկ լեռնային են, սնվում են ձնհալից և անձրևաջրերից, ինչպես նաև բազմաթիվ ստորերկրյա աղբյուրներից: Գետերի հիմնական ուղղությունը հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք է: Գետերի մեծ մասը սակավաջուր են, հեղեղները հիմնականում տեղի են ունենում զարնանը՝ առաջացնելով սելավներ: Այս գետերը բնութագրվում են բարձր անկմամբ և թեքություններով, արագ հոսքով, քարի և ավազի բարձր պարունակությամբ, ինչպես նաև լեռնային գետերին բնորոշ ջրվեժներով և սահանքներով: Աղստևը պարկի տարածքով անցնող հիմնական գետն է, որը սկիզբ է առնում Փամբակի հյուսիսային լանջերից /Թեժ լեռ, 3101մ/: Գետի երկարությունը 121 կմ է, ավազանի մակերեսը՝ 2500 քառակուսի կիլոմետր, իսկ տարեկան հոսքը՝ 256 մլն խորանարդ մետր: Այն սնվում է ձնհալներից ու անձրևներից և առավելագույն հոսքը նկատվում է մայիսից մինչև հունիս: Գետի վերին հոսանքն անցնում է Մարգահովիտի գոգավորությունով, որը նեղ կիրճ է, ապա ընդլայնվում է՝ հոսելով անտառածածկ խորը կիրճով, անցնելով Դիլիջան և Իջևան քաղաքների միջով: Այնուհետև գետը անցնում է հարթավայրով, հատում Հայաստանի սահմանը և թափվում Քուր գետը: Աղստևի հիմնական վտակը Գետիկն է, իսկ Հովվաջուր, Շտողանաջուր, Հաղարծին և Բլղան գետակները փոքր վտակներ են: Գետիկ գետը (58 կմ երկարությամբ և 586 քառակուսի կիլոմետր ավազանով) սկիզբ է առնում Սևանի լեռնաշղթայի հյուսիսային լանջերից՝ 2620մ բարձրությունից, հոսելով Արեգունու և Միափորի միջլեռնային հովտով: Այն աջ կողմից թափվում է Աղստև գետը՝ Հաղարծին գյուղից 5 կմ ներքև, Աղստևի գետաբերանից 63 կմ հեռավորության վրա: ԴԱՊ-ը հայտնի է իր հանքային աղբյուրներով: Հատկանշական են Թթուջուրը (Գետիկ գետի հովտում), Մարգահովիտը (հարուստ է երկաթով), Ֆիոլետովոն (հարուստ է ածխածնով և կալցիումով) և Բլղանի աղբյուրները (որոնք հայտնի են «Դիլիջան» բրենդավորմամբ): Հիդրո-կարբոնատներով հարուստ այս ջրերը օգտագործվում են աղեստամոքսային հիվանդությունների բուժման համար:

Պարկը հայտնի է նաև իր լճակներով, որոնցից ամենամեծն ու ամենահայտնին Արեգունի լեռնաշղթայի հյուսիսային լանջերին՝ 1400մ բարձրության վրա գտնվող Պարզ լիճն է, որն ընկած է Դիլիջան քաղաքից 8 կմ հյուսիս-արևելք: Պարզ լիճը զբաղեցնում է 2 հա մակերես, երկարությունը 250մ է, լայնությունը՝ 70մ, միջին խորությունը՝ 6մ, ջրի ծավալը՝ 83,8 հազ. խմ, իսկ ջրհավաք ավազանը՝ 1,52 կմ.քառ: Հաջորդը՝ Գոշալիճն է (Տգրկա), որը գտնվում է Պարզ լճից արևելք՝ ծովի մակերևույթից 1500մ բարձրության վրա: Այն ունի 56մ երկարություն և 270մ լայնություն, մակերեսը 1,53 հա է, ջրբաժան հատվածի մակերեսը՝ 1,34 կմ² է, իսկ միջին խորությունը՝ 6մ: Պարկում կան նաև մի քանի փոքրիկ լճակներ:

2.3 ԿԼԻՄԱՆ

Դիլիջանն առանձնանում է մեղմ լեռնաանտառային կլիմայով, որին բնորոշ է չոր և տաք եղանակ ամբողջ տարվա ընթացքում: Օդի միջին սեզոնային ջերմաստիճանի տատանումներն ավելի ցածր են, քան Երևանում՝ կազմելով -2.0°C հունվարին մինչև 18.2°C հուլիսին (Երևանում՝ համապատասխանաբար -4.1°C և 26.2°C), սակայն միջին տարեկան ջերմաստիճանն ավելի ցածր է, քան Երևանում (համապատասխանաբար՝ 8.1°C և 12°C): Դիլիջանին բնորոշ է խոնավ լեռնային կլիմա:

Տեղումների տարեկան առավելագույն քանակը տատանվում է 35%-ից զարնանը մինչև 12% ձմեռային ամիսներին: Մայիսին տեղումների քանակը հասնում է շուրջ 100 մմ-ի, իսկ հունվարին՝ 12 մմ-ի:

Տեղումների միջին տարեկան քանակը կազմում է 593 մմ՝ երեք անգամ ավելին, քան Երևանում (200 մմ):

Արևափայլի միջին տարեկան տևողությունը Դիլիջանում կազմում է 2091 ժամ (Երևանում՝ 2480 ժամ), իսկ օդի տարեկան միջին հարաբերական խոնավությունը կազմում է 73%: Ձյունախախկույթի միջին բարձրությունը 18 սմ է (Երևանում՝ 2,5 սմ), իսկ առավելագույնը՝ 39 սմ (հյուսիսային լանջերին):

Գերակայում են արևելյան (17%) և հյուսիս-արևելյան (46%) քամիները՝ 2 մ/վրկ միջին տարեկան արագությամբ: Ամպրոպներով օրերի քանակը տարվա ընթացքում կազմում է 15-20:

2.3.1 Օդերևութաբանական-կլիմայական պայմանները

Այս բաժնի մշակման նպատակն է օդերևութաբանական-կլիմայական պայմանների գնահատումը, որոնք որոշիչ են բնակչության ապրելակերպի և մթնոլորտի մերձգետնյա շերտում, վնասակար նյութերի ցրման բնութագրի վրա ազդեցությունների տեսանկյունից:

Շրջանի կլիման բարեխառն է: Բնութագրվում է մեղմ ամառներով (բացարձակ մաքսիմումը հասնում է $+34^{\circ}\text{C}$), համեմատաբար ցուրտ ձմեռներով (բացարձակ մինիմումը ոչ ցածր քան -23°C): Օդի միջին տարեկան ջերմաստիճանը կազմում է 5.3°C , ամենաշոգ օգոստոս ամսվա միջին ջերմաստիճանը՝ $+20.6^{\circ}\text{C}$, ամենացուրտ ամսվանը հունվար՝ -8.5°C : Առավելագույնը դիտվում է մայիս ամսին՝ 109 մմ, նվազագույնը հունվարին՝ 27 մմ: Ձյան տեսքով թափվող տեղումների քանակությունը 67 մմ է: Նոյեմբերի 5-ից դիտվում է կայուն ձնածածկ, որը վերանում է ապրիլի 18-ին: Ձյան ծածկույթի առավելագույն շերտի բարձրությունը 74 սմ է, նվազագույնը 3 սմ:

Օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը կազմում է 73 %: Քամու միջին տարեկան արագությունը կազմում է 3.1 մ/վրկ:

2.3.2 Ընդհանուր ֆոնային կլիմայական բնութագիրը

Ֆոնային կլիմայական բնութագիրը իր մեջ ընդգրկում է երկու հիմնական ասպեկտ՝ գ կլիմայի գնահատականը մարդու ֆիզիոլոգիական հարմարավետության վրա ազդեցության տեսանկյունից գ կլիմայի գնահատականը վնասակար նյութերի ցրման պայմանների վրա ազդեցության տեսանկյունից:

Կլիմայի գնահատականը մարդու ֆիզիոլոգիական հարմարավետության վրա ազդեցության տեսանկյունից տրված է աղյուսակ 1.1-ում:

Աղյուսակ 1.1 Կլիմայի գործոնների կենսակլիմայական գնահատականի չափանիշները

Կլիմայի գործոնները	Հարմարավետությունը	Անհարմարավետություն	
		գերտաքացում	սառեցում
1. Օդի ջերմաստիճանը, °C	12-14	24-ից բարձր	30-35, 1.5 մ/վրկ, 25, 2.0 մ/վրկ, -15, 3.5 մ/վրկ քամու դեպքում,
2. Քամու արագությունը, վ/վրկ	0.5-3.0	փոքր 0.5 մեծ 3.0	5-ից մեծ բացասական ջերմաստիճանի դեպքում
3. Հարաբերական խոնավությունը, %	30-70	30-ից փոքր 70-ից բարձր	80-ից բարձր

Դիլիջան քաղաքի օդերևութաբանական պարամետրերը վերցված են «Շինարարական կլիմայաբանություն» СНиП II-7.01-2011 տվյալների համաձայն:

Աղյուսակ Օդի ջերմաստիճան

Բնակավայրի. օդերևութաբանական կայանի անվանումը	Բարձրություն ծովի մակարդակից. մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների. °C												Միջին տարեկան. °C	Բացարձակ նվազագույն. °C	Բացարձակ առավելագույն. °C
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Դիլիջան	1256	-1.5	-1,0	2.2	7.7	12,0	15.2	18.3	18.1	14.3	9.3	4.3	0.4	8.3	-23	38

Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %														Միջին ամսական ժամը 15-ին	
	ըստ ամիսների													Միջին տարեկան, %	ամենացուրտ ամսվա %	ամենաշոգ ամսվա, %
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր				
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	
Դիլիջան	63	65	70	72	78	79	77	78	79	78	73	70	74	51	60	

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Տեղումների քանակը $\frac{\text{միջին ամսական}}{\text{օրական առավելագույն}}$, մմ												Ձնածածկույթ			
	ըստ ամիսների												Տարեկան	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Չյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր				
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Դիլիջան	22	30	45	65	106	103	66	51	46	47	36	22	639	53	57	103
	35	33	42	43	58	62	55	47	45	45	49	33	62			

Քամի

1	2	3	Կրկնելիությունը, %								12	13	14	15	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ «ո» տարիների ընթացքում					
			Միջին արագությունը, մ/վ												Միջին արագությունը, մ/վ	Միջին արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (≥15մ/վ) օրերի քանակը	20	50	100
			Հյուսիս-սային (Հս)	Հյուսիս-Արեւելյան (ՀսԱրլ)	Արեւելյան (Արլ)	Հարավ-Արեւելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավ-Արեւմտյան (ՀվԱրմ)	Արեւմտյան (Արմ)	Հյուսիս-Արեւմտյան (ՀսԱրմ)										
Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Ամիսներ	4	5	6	7	8	9	10	11	Անհողմությունների կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (≥15մ/վ) օրերի քանակը	16	17	18			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18			
Դիլիջան	875,6	հունվար	3	19	2	3	22	32	15	4	28	2,1	1,8	4	20	22	24			
			1,6	1,7	1,8	2,4	2,8	2,5	2,0	1,5										
		ապրիլ	4	41	6	4	13	20	9	3	31	2,0								
			1,6	2,2	2,0	2,4	2,5	2,3	1,6	1,5										
		հուլիս	5	63	10	2	2	7	8	3	42	1,7								
			1,9	2,5	2,4	1,4	1,4	1,3	1,1	1,4										
		հոկտեմբեր	5	46	6	3	10	17	10	3	43	1,5								
			1,7	2,2	1,9	1,7	1,9	1,7	1,4	1,4										

Արևափայլի տևողությունը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Տևողությունը ըստ ամիսների, ժամ												Տարեկան գումարային
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Դիլիջան	125	131	155	156	199	222	232	221	181	163	115	112	2012

Անարև օրերի քանակը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	ըստ ամիսների												Տարեկան
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Դիլիջան	4	6	5	4	2	1	2	2	3	3	6	5	43

Տարվա ցուրտ ժամանակաշրջանի կլիմայական հարաչափերը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի ջերմաստիճանը, 0C					Բացարձակ նվազագույնը	ամենացուրտ ամսվա միջին օրական տատանումը	Տևողությունը, օր			Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը %		Մթնոլորտային տեղումները և գրունտի սառչման խորությունը		Քամի	
	ամենացուրտ օրվա	ամենացուրտ հնգօրյակի	ամենացուրտ ժամանակաշրջանի միջինը	ապահովվածությամբ, %	ամենացուրտ ամսվա միջին օրական տատանումը			Միջին ջերմաստիճանը ժամանակաշրջանի միջին օրական ջերմաստիճանով՝ ոչ բարձր, °C	միջին ամսական	միջին ամսական ժամը 15-ին	Տեղումների քանակը նոյմբերմարտ ամիսներին, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր-փետրվար ամիսներին	Միջին արագությունները առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին մ/վ		
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Դիլիջան	-17	-15	-14	-12	-1,8	-23	10,4	73	178	201	63	51	155	47	Հվ	2,8
								-1,2	1,7	2,6						

Տարվա տաք ժամանակաշրջանի կլիմայական հարաչափերը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի ջերմաստիճանը, 0C				Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Մթնոլորտային տեղումները, մմ		Քամի, մ/վ		
	Ապահովվածությունը, %		բացարձակ առավելագույնը	ամենատաք ամսվա միջին առավելագույնը	ամենատաք ամսվա միջին օրական տատանումը	միջին ամսական	միջին ամսական ժամը 15-ին	Տեղումների քանակ ապրիլ-հոկտեմբեր ամիսներին	Տեղումների օրական առավելագույն քանակը	Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին
	0,95	0,99									
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Դիլիջան	24	25	38	24,4	11,7	77	60	484	62	ՀսԱրլ	2,5

2.4 Օդային ավազան

Դիլիջան քաղաքային բնակավայրի տարածքում մթնոլորտն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները (մգ/մ³), վերցված են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կայքէջից (ըստ բնակչության քանակի) և բերված են աղյուսակում:

Աղյուսակ. Աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաների արժեքները $U_x=7$ մ/վրկ

№№ ը/հ	Աղտոտող նյութերի կոդերը և անվանումները	ՄԹԽ, մգ/մ ³	Ֆոնային կոնցենտրացիաները	
			մգ/մ ³	միավոր ՄԹԽ
1	002 Փոշի	0.5	0.3	0.6
2	701 Ծծմբի երկօքսիդ	0.5	0.05	0.1
3	200 Ազոտի օքսիդներ	0.2	0.015	0.075
4	322 Ածխածնի օքսիդ	5.0	0.8	0.16

Ինչպես երևում է աղյուսակից, Դիլիջան համայնքի տարածքում վնասակար նյութերի կոնցենտրացիաները գտնվում են բնակելի գոտիների համար սահմանված նորմերում:

Մթնոլորտային օդի աղտոտվածության գնահատումը կատարվել է «Методические указания по санитарному надзору в районной планировке – М. Минздрав СССР, 1990» համապատասխան:

2.5 Հողերի նկարագիրը

Հողերը

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- ❖ Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- ❖ Կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- ❖ Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

2.6 Հիմնային աշխատանքներ

Նախատեսվող գործունեության նախագիծը ենթադրում է նաև հիմքերի փորման աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 19000 խմ ընդհանուր ծավալով փորման աշխատանքեր Հանվող 12000 խմ ծավալով զանգվածը կտեղափոխվի Դիլիջանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր, մնացած մասը՝ կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք:

2.7 Անտառ

Ազգային պարկի բուսականության գերիշխող տիպը անտառայինն է: Այստեղ գերակշռում են սաղարթավոր տերևաթափ տեսակները՝ արևելյան հաճարենին (*Fagus orientalis*), վրացական կաղնին (*Quercus iberica*), խոշորառեչ կաղնին (*Q. macranthera*), կովկասյան բոխին (*Carpinus caucasica*), դաժին կամ արևելյան բոխին (*C. orientalis*): Մրանց ուղեկցում են դաշտային (*Acer campestre*), սրատերև (*A. platanoides*) և բարձրլեռնային (*A. trautvetteri*) թխկիները, լորենին (*Tilia caucasica*), հացենին (*Fraxinus excelsior*), արոսենին (*Sorbus aucuparia*, *S. graeca*) և այլն: Հանդիպում են նաև վայրի պտղատուներ՝ կովկասյան տանձենին (*Pyrus caucasica*), արևելյան խնձորենին (*Malus orientalis*), սալորենին (*Prunus divaricata*), մամխենին (*P. spinosa*), ընկուզենին (*Juglans regia*), սովորական տիլենին (*Corylus avellana*), հոնին (*Cornus mas*), սզնու տարբեր տեսակներ (*Crataegus*), զկեռենի (*Mespilus germanica*), թխենի (*Padus*) և այլն: Հարուստ է նաև հատապտղատուների բազմազանությունը՝ հաղարջենի (*Ribes*), մոշենի (*Rubus caesius*), մորի (*R. idaeus*), կոկոռչենի (*Grossularia*) և այլն: Անտառի վերին սահմանը եզրափակում են կեչու կորաբուն մերձալպյան նոսրանտառային մնացորդները՝ ելունդավոր և թավոտ կեչիների (*Betula pendula*, *B. pubescens*), կաղամախու (*Populus tremula*), այծուռենու (*Salix caprea*) գերակշռությամբ: Հիմնական անտառկազմող ծառատեսակների գերակշռությամբ ծառուտները ներկայացվում են կամ միատարր կաղնուտների, հաճարկուտների և բոխուտների ձևով, կամ էլ խառը՝ դրանց տարբեր խմբավորումների տարբերակներով: Անտառային էկոհամակարգերը ըստ ուղղաձիգ բարձունքային գոտիականության և դիրքադրության ունեն հետևյալ տարածվածությունը: Միջին անտառային գոտու հարավահայաց լեռնալանջերին տարածվում են վրացական կաղնու, իսկ հանդիպակաց հյուսիսահայաց լանջերին՝ արևելյան հաճարենու անտառային զանգվածները: Դրանից վեր, սկսած 1500 մ բարձրությունից, անտառային գոտին ներկայացնում է խոշորառեչ կաղնին: Բոխին հանդիպում է գրեթե բոլոր տիպի ծառուտներում: Ընդ որում՝ արևելյան բոխին (դաժին), որպես կանոն, հանդիպում է ստորին անտառային գոտու (մինչև 1500 մ) ենթանտառում, իսկ կովկասյան բոխին՝ մինչև 2000 մ: «Դիլիջան» ազգային պարկի անտառային էկոհամակարգերին բնորոշ է ասեղնատերև ծառատեսակների առկայությունը: Սոճին (*Pinus sosnowskyi*) որոշ տեղերում առաջացնում է խիտ ծառուտներ, հանդիպում է Արեգունի և Փամբակի լեռանշղթաների լանջերին, մասնավորապես՝ Դիլիջանի լեռնանցքի ոլորանի շրջանում: Հանդիպում է նաև Դիլիջան քաղաքային բնակավայրի և մերձակա լանջերին: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում գիհու նոսրանտառները, որոնք տարածված են Գետիկի հովտում, ինչպես նաև Իջևանի լեռնաշղթայի հյուսիսային հովտահայաց չոր լանջերին: Լավ պահպանված գիհուտներ կան հատկապես Աբեղաքար սարի, Աղստև գետին հովտահայաց, Ժայռոտ լանջերին: Գիհու նոսրանտառները ներկայացնում են բազմապտուղ (*Juniperus polycarpus*) և սրաթեփուկ կամ զարշահոտ (*J. foetidissima*) գիհիները: Պարկի տարածքում աճում են նաև գիհու թփային տեսակները՝ երկարատերև (*J. oblonga*) և ցածրաձ (*J. depressa*):

Բուսականության այլ տիպերը ներկայացված են փոքր կղզյակներով՝ անտառային բացատներում կամ անտառի վերին սահմանից վեր:

Պարկի ստորին հատվածում (մինչև 1100 մ բարձրության վրա) փոքր տարածքներով հանդիպում են շիբլյակ կոչված թփուտները, ուր գերիշխում են ցաքի փշոտ (*Paliurus spina-christi*) և չորասեր թփերի մի քանի այլ տեսակներ՝ ծորենի սովորական (*Berberis vulgaris*), չմենի ամբողջաեզր (*Cotoneaster integerrimus*), մասրենի շան (*Rosa canina*), փռչնի կովկասյան (*Celtis caucasica*), դժնիկ Պալլասի (*Rhamnus pallasii*) և այլն: Այս համակեցություններում խոտային ծածկույթը շատ բազմազան է և ներկայացված է հիմնականորեն չորասեր խոտաբույսերով: Այստեղ հանդիպում են նաև տափաստանային բուսականության փոքր կղզյակներ բոտրիոխլոայի (*Bothriochloa ischaemum*) գերակայմամբ, որոնք հիմնականում երկրորդային ծագում ունեն: Անտառագուրկ ոչ մեծ տարածքներում հանդիպում են այս շրջանի համար ոչ բնորոշ շյուղախոտ վալեսյանի (*Festuca valesiaca*) գերակշռությամբ տափաստանային խմբավորումները, որոնց կազմում բավականին շատ են մարգագետնային բուսատեսակները: (1800)- (1900) մ-ից բարձր տարածված են մերձալպյան մարգագետինները, ուր գերիշխում են խառը տարախոտ- հացազգային համակեցությունները: Հիմնական գերակշռող տեսակներն են բարակոտնուկ սանրանմանը (*Koeleria cristata*), դաշտավլուկ մարգագետայինը (*Poa pratensis*), դաշտավլուկ կաղնուտայինը (*Poa nemoralis*), ոգնախոտ կծկավոր (*Dactylis glomerata*), խմբախոտ բուրավետը (*Anthoxanthum odoratum*), ոսկեվարսակ սիբիրյանը (*Trisetum sibiricum*) և այլն: Այստեղ տարածված են համակեցություններ, ուր գերակայում են վարդակակաչ փնջաձևը (*Anemone fasciculata*), ձկին գորտնուկանմանը (*Trollius ranunculinus*) և կեղծ դանձլամեր սպիտակը (*Veratrum album*), ընդ որում՝ վերջինի տարածումը ուղղակիորեն կապված է արածեցման ինտենսիվության հետ: Մերձալպյան գոտու որոշ հատվածներում տարածված են մերձալպյան բարձրախոտերի համակեցությունները, որտեղ ներկայացված են շուշան հայկականը (*Lilium armenum*), ընձախոտ արևելյանը (*Aconitum orientale*), զիվան հսկայական (*Cephalaria gigantea*), ոգնախոտ կծկավորը (*Dactylis glomerata*), զանգակ խմբվածը (*Campanula glomerata*), թթվիճ խոշորածաղիկը (*Betonica macrantha*) և այլն: «Դիլիջան» ազգային պարկի տարածքի ձորերի ժայռոտ հատվածներում ներկայացված է ինտրագոնալ ժայռային բուսականությունը, որի կազմում հատուկ հետաքրքրություն են ներկայացնում պտերների մի քանի տեսակներ՝ բանպոտ Բաունի (*Polystichum braunii*), բասբայջ սովորական (*Polypodium vulgare*), ասպլենի (*Asplenium*) որոշ տեսակներ: Ազգային պարկի տարածքում գտնվող լճերի և գետերի ափերին ներկայացված է ջրաճահճային բուսականությունը, որի կազմում են հիմնականում Հայաստանի համար սովորական տեսակներ՝ ուռենի (*Salix*), բարդի (*Populus*), բոշխ (*Carex*), գորտնուկ (*Ranunculus*), կնյուն (*Juncus*) ցեղերի ներկայացուցիչներ:

2.8 Կենսաբազմազանություն

2.8.1 Բուսական աշխարհ

«Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում ֆլորան ընդգրկում է անոթավոր բույսերի 1200 տեսակ, որից 977 տեսակը աճում է պարկի տարածքում: Դրանցից 51-ը ծառատեսակներ են, 47-ը՝ թփեր, 696-ը՝ բազմամյա խոտաբույսեր, 176-ը միամյա և երկամյա բույսեր, 7-ը մակաբույծներ: Նշված տեսակներից 7-ը հանդիսանում են Հայաստանի էնդեմիկներ: Պարկի պահպանական գոտում հանդիպում են անոթավոր բույսերի 958 տեսակներ (դրանցից 225-ը չեն հանդիպում ազգային պարկի տարածքում): Պահպանական գոտում (Աղստն գետի ձորի լանջերի բաց տեղանքներում) աճում է ևս մեկ էնդեմիկ տեսակ՝ Պսեֆելլուս Փամբակի (*Psephellus pambakensis*), որը բավականին լայն տարածում ունի Լոռիում և Իջևանում: Ազգային պարկի ֆլորայի 17 տեսակներ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում: Ազգային պարկի ֆլորայի 54 տեսակներ հանդես են գալիս որպես դեղաբույսեր: Դրանց մի մասը չեն կազմում խիտ պոպուլյացիաներ, այլ ցրված հանդիպում են ազգային պարկի տարածքում և այդ պատճառով ներկայումս տնտեսական հետաքրքրություն չեն ներկայացնում, իսկ 41 տեսակներ ուտելի են:

Բացի այդ, «Դիլիջան» ազգային պարկի տարածքից և դրա պահպանական գոտուց հայտնաբերվել են 480 տեսակի և ենթատեսակի սնկեր, որոնցից 320-ը պատկանում են ազարիկալ սնկերին, 124-ը՝ աֆիլոֆորայիններին և 36-ը՝ գաստերոմիցետներին: Առավել տարածված են դառնամատիտեղ (*Russula*), կաթնասունկ (*Lactarius*), սարդոստայնասունկ (*Cortinarius*), թելիկասունկ (*Inocybe*), ճանճասպան (*Amanita*) ցեղերի միկորիզագոյացնող տեսակները, ինչպես նաև բնափայտ քայքայող ականջասունկ սովորական (*Pleurotus ostreatus*), կոճղասունկ իսկական (*Armillaria mellea*) տեսակները և Աբեթասնկեր (*Polyporaceae*) ընտանիքի ներկայացուցիչները: Նշված սնկերից 176-ը ուտելի են, որոնցից առավել տարածված է և վաճառվում է շուկաներում միայն ականջասունկ սովորական կամ կախասունկ (*Pleurotus ostreatus*) տեսակը: 38 տեսակի սնկեր թունավոր են և տեղացի բնակիչները դրանց կոչում են գարշասնկեր (պոգանկա), խուսավորում են հավաքելուց, և վերջին տարիներին թունավորման դեպքեր չեն գրանցվել:

Ըստ ՀՀ Ատլասի (2007 թ.) Դիլիջան քաղաքային բնակավայրի տարածքը գտնվում է բուսական Կովկասյան պրովինցիայում՝ Իջևանի շրջանում: Դիլիջան քաղաքային բնակավայրում և մոտակայքում բույսերի էնդեմիկ տեսակներ չեն հայտնաբերվել: Այստեղ տարածված են կաթնափուշ բժավոր (*Sylibum Marianum*) բուսատեսակներ: Դիլիջանում տարածված են դեղաբույսեր՝ ալոճների մուգ արնագույն և այլ տեսակներ (*Crataegus Atrosanguinea*), գետնամորի անտառային (*Fragaria Vesca*):

2.8.2 Կենդանական աշխարհ

Անողնաշարավորներ

«Դիլիջան» ազգային պարկի տարածքում հանդիպում են փափկամարմինների (Mollusca) 69 և հողվածոտանիների (Arthropoda) 1431 տեսակներ: Վերջիններս պատկանում են միջատների (Insecta) դասին: Նշված տեսակներից 7-ը Հայաստանի էնդեմիկներ են: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցանկում ընդգրկված են 3 տեսակներ, որոնք հանդիպում են «Դիլիջան» ազգային պարկի տարածքում: Դրանք են՝ *Parnassius apollo* L., *Cerambyx cerdo acuminatus* Motsch., *Rosalia alpina* L. և *Proserpinus proserpina* Pall-ը:

Սողուններ

«Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում բացահայտվել են սողունների 19 տեսակներ, որոնք բաժանվում են հետևյալ կարգաբանական խմբերի.

- Մողեսներ (Lacertilia) – 12 տեսակ.
- Օձեր (Serpentes) – 6 տեսակ.
- Կրիաներ (Testudines) - 1:

Նշված սողուններից ոչ մեկը Հայաստանի Կարմիր գրքում գրանցված չէ:

Կաթնասուններ

«Դիլիջան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հանդիպում են կաթնասունների 49 տեսակներ: Դրանք բաժանված են հետևյալ 6 կարգաբանական դասերի.

- Միջատակերներ (Insectivora) – 9 տեսակ.
- Կրծողներ (Rodenti) – 17 տեսակ.
- Նապաստակակերպեր (Logomorpha) – 1 տեսակ.
- Ձեռքաթևավորներ (Chiroptera) – 7 տեսակ.
- Գիշատիչներ (Carnivora) – 12 տեսակ.
- Կճղակավորներ (Artiodactyla) – 3 տեսակ:

Նշված կաթնասուններից Հայաստանի Կարմիր գրքում գրանցված են 6-ը՝ Եվրոպական լայնական ծալքաշուրթը, հնդկական վայրենակերպը կամ մացառախոզը, իսայտաքիսը, ջրսամույրը, գորշ արջը և անտառային կատուն:

2.9 Բուսական աշխարհի պահպանության միջոցառումներ

Ծառափայլին բուսականության վրա բացասական ազդեցության ի սկզբանե կանխարգելման և պահպանության նկատառումներից ելնելով՝ նախագծման ընթացքում հանգստի գոտին նախագծվել է բացառապես բացատներում՝ բացառելով ծառերի հատումը: Բուսական աշխարհի պահպանության նպատակով իրականացվելու են հետևյալ միջոցառումները՝

1) վայրի բուսատեսակների և դրանց պոպուլյացիաների վիճակի ուսումնասիրության (տեսակային կազմ, տարածվածություն, քանակ) իրականացում, որի տվյալները սահմանված կարգով տրամադրվում են բուսական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում լիազորված պետական մարմինն:

2) բուսատեսակների այլ աճելավայրեր ապօրինի տեղափոխման և այդ տարածքում այլ տեսակների կլիմայավարժեցման կանխարգելում:

3) կենսաբանական տեխնոլոգիաների միջոցով ստացված կենդանի ձևափոխված օրգանիզմների ապօրինի օգտագործման և օտարածին տեսակների ներմուծման կանխարգելում:

4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ արգելված թունաքիմիկատների օգտագործման կանխարգելում:

4. Հողերում Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում (այսուհետ՝ կարմիր գիրք) գրանցված տվյալ բուսական տեսակի նոր պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով սույն կարգի 3-րդ կետով նախատեսված միջոցառումների հետ միասին տնտեսական գործունեություն իրականացնողները՝

1) ժամանակավորապես սահմանափակում են առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը:

3) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված միջոցառումների իրականացման անհնարինության դեպքում կարմիր գրքում, որպես տվյալ բույսի աճելավայր չգրանցված տարածքներից, բույսերի բնական վերարտադրության նպատակով տեղափոխում են տնտեսական գործունեության արդյունքում ոչնչացման սպառնալիքի տակ գտնվող բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայրեր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրում են համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը՝

զենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով:

5. Հողերում հայտնաբերված՝ կարմիր գրքում գրանցված տվյալ բուսական տեսակի նոր պոպուլյացիաների առանձնյակների տեղափոխումն իրականացվում է տնտեսական գործունեություն իրականացնողների միջոցների հաշվին՝ տնտեսական գործունեություն իրականացնողի կողմից ներկայացված տվյալ բուսատեսակի առանձնյակների տեղափոխման միջոցառումների իրականացման վերաբերյալ բուսական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում լիազորված պետական մարմնի հետ կնքված համապատասխան պայմանագրի համաձայն:

2.9.1 Կենդանական աշխարհի պահպանության միջոցառումներ

Ամենամեծ ազդեցությունը կարտահայտվի հողային աշխատանքների ժամանակ դրանց բների ոչնչացմամբ: Սակայն կենդանիները այդ դեպքում առանց մեծ կորուստների կից տարածքներում կգտնեն նոր բների և բնակավայրերի լայն հնարավորություններ:

Ազգային պարկի զարգացման և բնության պահպանության հարցերում էական աջակցություն են ցուցաբերում երեք հասարակական կազմակերպություններ՝ Կովկասի բնության հիմնադրամը (CNF), Վայրի բնության համաշխարհային հիմնադրամը (WWF):

1. CNF-կողմից իրականացվել է Դիլիջանի ազգային պարկի կառավարման պլանի մշակումը: Բացի այդ, WWF-ի հետ համատեղ կատարվում են Դիլիջանի տարածաշրջանի անտառներում ազնվացեղ եղջերուի խիստ սակավաթիվ պոպուլյացիայի վերականգնմանն ուղղված աշխատանքներ:

2. Վայրի բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) գործունեությունը Հայաստանում ընդգրկում է գոյություն ունեցող հատուկ պահպանվող տարածքների զարգացումն ու դրանց կառավարման համակարգերի կատարելագործումը, նոր պահպանվող տարածքների ստեղծմանն ուղղված քայլերի ձեռնարկումը, վտանգված տեսակների պահպանումը, էկոհամակարգերի վերականգնումը, կլիմայական փոփոխություններին անտառների հարմարեցումը և բնապահպանական կրթության և իրազեկման բարձրացման ծրագրերին սատարումը: Ներկայումս «WWF-Հայաստանը» ՀՀ բնապահպանության նախարարության հետ միասին և «WWF-Գերմանիայի», CNF-ի և «Օրանժ Արմենիայի» աջակցությամբ իրականացնում է Դիլիջանի ազգային պարկում «ազնվացեղ եղջերուների պոպուլյացիայի վերականգնում» (ազնվացեղ եղջերուների բազմացման կենտրոնի ստեղծում) ծրագիրը:

3.0 Թափոնների կառավարում

Աղբահանության նպատակով կտեղադրվեն աղբահավաք տարողություններ և աղբարկղեր: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր պայմանագրային հիմունքներով:

Շինարարական աշխատանքերի ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը /ծածակագիրը՝ 9120040001004/՝ 6.7 տ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, և 220 խմ շինարարական աղբը /ծածակագիրը՝ 9120060101004/ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Շինարարական աղբը կհավաքվի հատուկ նախատեսված հարթակի վրա, և շինարարական հրապարակում կարճաժամկետ պահելուց հետո կտեղափոխվի համայնքի կողմից հատկացված վայր: Տարածքում բացառվում է թափոնների այրումը:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետական նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարական հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շինարարական հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

4.1 ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

4.2 ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ (CO, NO_x):

4.3 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

4.3.1 ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով.
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:

4.3.2 ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզաբան: Անձրևաջրերի նստեցման պարզաբանը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25խմ ծավալով տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500քմ մակերեսով տարածքի վրա: Պարզաբանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադբ:

4.3.3 ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շին. աշխատանքների ընթացքում իրականացնել հողերի որակի մոնիթորինգ
- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող շինարարական թափոնները կպահեստավորվեն տարածքում հատուկ նախատեսված վայրում և կծածկվեն:
- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած շինարարական թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի:
- Հողի բերրի շերտը պահպանելու նպատակով նախատեսվում է առաջնորդվել ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի թիվ 1396-Ն որոշմամբ հաստատված Հողի բերրի շերտի օգտագործման կարգով և 02.12.2017թ.-ի թիվ 1404 որոշմամբ, մասնավորապես նախատեսել հետևյալ միջոցառումները.

- Հողի բերրի շերտը հանել և պահպանել ծածկված վիճակում՝ բացառելով շինարարական աշխատանքների հետևանքով դրա աղտոտումը:
- Հողային աշխատանքների կատարման ընթացքում չօգտագործված հողի հանված բերրի շերտն անմիջապես դարսվում է լայնակույտերով:
- Լայնակույտերի բարձրությունը և ձևը պետք է բացառի հողատարման գործընթացների զարգացումը:
- Եթե հողի հանված բերրի շերտը նախատեսվում է պահել 2 տարին գերազանցող ժամկետով, ապա, ողողումը և հողմատարումը կանխելու համար, լայնակույտերի մակերևույթն ու թեքությունները ամրացվում են խոտացանքով կամ այլ եղանակներով: Թույլատրվում է լայնակույտի թեքությունների վրա ցանքսը կատարել հիդրոեղանակներով:
- Բերրի շերտը տեղադրվում է տարածքում՝ բացառելով աղակալումը, արդյունաբերական թափոններով և կոշտ առարկաներով, քարերով, խճով, ճալաքարով ու շինարարական աղբով աղտոտումը:

5. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում նախատեսվում է հրշեջ հիդրանտի տեղադրում):
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն,

ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:

- Շինարարական աշխատանքների ժամանակ՝
 - ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,
 - բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,
 - գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:
- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
- Բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:
- Նախատեսվող հանգստի գոտում առկա վտանգավոր օբյեկտները «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով կներկայացվեն տեխնիկական անվտանգության փորձաքննությունների;
- Անվտանգության նկատառումներից ելնելով շին.հրապարակում կտեղադրվեն կողմնակի անձանց մուտքը արգելող նշաններ, և շինհրապարակը կապահովվի լուսավորությամբ:
- իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում ղեկավարվել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն

հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

Ըստ նախնական գնահատման, ապահովելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների և առողջապահական ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

6. ԱՂՄՈՒԿԻ և ԹՐԹՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:
- պարբերաար ստուգել և կարգաերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:

7. ՄՇՏԱՂԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ

Հանգստի գոտու շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ;
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ;
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ;
4. Կենսաբազմազանության մշտադի-տարկման իրականացում հարակից տարածքների վիճակի փոփոխության վերաբերյալ (տարին մեկ անգամ):
5. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
6. Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների,
7. Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարության ընթացքում հատկացնել 2480000 դրամ:

Մշտադիտարկում և բնապահպանական միջոցառումներ, շին. փուլ/ դրամ		
Տարածքի ջրցան փոշեգոյացումը կանխելու նպատակով	400000	400000
Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ;	48x35000	1680000
Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:	16x25000	400000
Հարակից տարածքի կենսաբազմազանության ուսումնասիրություն	1x50000	50000
Ամբողջ շինարարության համար		2530000

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախագգուշացումներ և աշխատողների անվտանգություն	(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախագգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ (b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել (c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա: (d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) (e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	(a) Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարողություններ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համար՝ Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով (b) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով (c) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի: (d) Շինարարության ընթացքում համաձայն մթնոլորտային օդի պահպանության մասին օրենքի, փոշեգոյացումը կանխելու նպատակով շենքերը կծածկվեն անթափանց թաղանթով
	Աղմուկ	(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում (b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականության միջոցով սնվող սարքերը պետք է ծածկվեն:

	Թափոնների կառավարում	<p>(a) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր:</p> <p>(b) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից</p> <p>(c) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն</p>
Կեղտաջրերի հեռացում	Ջրի որակ	<p>(a) Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով ավտոցիստեռներով: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով,;</p> <p>(b) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն նախատեսված տարածքներում, որտեղից ջրի արտահոսք չի լինի:</p> <p>(c) Շինհրապարակից ելքի ժամանակ լվացվում են տեխնիկական միջոցների անվաղողերը: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:</p>
Հետիոտների և երթևեկության ապահովություն	Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ	<p>(a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով.</p> <ul style="list-style-type: none"> ▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պտտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ ▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության զոնայում: ▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին: ▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուղարձի համար.
Արտակարգ իրավիճակների	Շինարարական աշխատանքների	<p>- Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;</p>

<p>կառավարում</p>	<p>հետևանքով արտակարգ իրավիճակների կառավարում</p>	<ul style="list-style-type: none"> - Շինարարական բոլոր տեղամասերում անհրաժեշտ է ապահովել արտակարգ պատահարների դեպքում կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը; - Շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, հրշեջ հիդրանտներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն: - Մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար: - Հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում՝ ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ - Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագություն, անհողմություն, մառախուղ) դեպքում աշխատանքներն իրականացնել պահպանելով անվտանգության բոլոր կանոնները կամ շին. աշխատանքները դադարեցնել մինչ օդերևութաբանական պայմանները կլինեն բարենպաստ աշխատանքները վերսկսելու համար:
<p>Կենսաբազմազանություն</p>		<ul style="list-style-type: none"> - Ազգային պարկի տարածքում աշխատանքներն իրականացնելիս առաջնորդվել ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներով: - Ազգային պարկի տարածքում աշխատանքներն իրականացնել բացառապես ձեռքի գործիքներով մասնագետի հսկողության ներքո: - Նախքան շինարարական տեխնիկան ազգային պարկի տարածքով տեղափոխելը՝ դրա մասին ծանուցել «Դիլիջան» ԱՊ-ին: - Շինարարական աշխատանքներն իրականացնելիս առաջնորդվել ՀՀ կառավարության 17.03.2005թ. N293-Ն որոշմամբ,

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում - հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում 	<ul style="list-style-type: none"> - Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ 	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում 	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու
Հողային	- Հանված հողերը հեռացվում են	Շինհրապարակ	Գործընթացների	Հողային	Կապալառու

աշխատանքներ	համայնքի կողմից հատկացված վայր		ստուգում	աշխատանքների ընթացքում	
Իներտ շինանյութերի գնում	- Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից	Իներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում	Մատակարարման ընթացքում	Կապալառու, մատակարար
Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ	Շինհրապարակ	Արտաքին գնում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողություն
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու
Կանաչապատում	Տեղանքին բնորոշ ծառաթփային բուսականության տնկում	Սեփական տարածք	Արտաքին գնում	մշտական	Կապալառու

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
2. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
3. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ



Ձև N 1-2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔ
(մարզը, համայնքը)

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N Ա1-57 « 20 » հունիս 2021թ.

Օրյեկտ ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏՈՒ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ
(օրյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)

/բարձր ռիսկայնության աստիճանի IV կատեգորիա/
(հակիրճ բնորոշումը, հզորությունը)

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ նախագծային փաստաթղթերի մշակման համար:
(օխակայնության աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ԹԵՂՈՒՏ ԳՅՈՒՂ, ՊԱՐԶ ԼՃԻ 1, 11-029-0219-0002
(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող ԱՐԹՈՒՐ ՏԻԳՐԱՆՅԱՆ, ԱՆԻ ԱՐԳԱՐՅԱՆ, Ք. ԵՐԵՎԱՆ, ՆՈՐԱՇԵՆ 23/6
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ ' ԹԻՎ 14062021-11-0009
(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը Նախագիծը ներկայացնելի համաձայնեցման Դիլիջանի համայնքապետարան մինչև 2023 թվականի հունիսի 20-ը:
(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. Հողամասը գտնվում է համայնքի հատուկ պահպանվող տարածքների հանգստի համար նախատեսված հողերի կազմում
(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)
2. (*) Հողամասի չափերը 3.03 հա
(հողամասի սահմանները կորդինատային նշահարմար, մակերեսը (հա))
3. Հողամասի առկա վիճակը Հողամասը կառուցապատված չէ
(ոեյիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդան էնթալա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)
4. (*) Տրանսպորտային պայմանները Հողամասի տրանսպորտային մուտքը նախատեսվում է Ազգային Պարկի տարածքով
(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մուտքումները և այլն)
5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր) Հողամասն • ապահովված չէ ինժեներական կոմունիկացիաներով /ջրատար, կոյուղատար, գազատար և էլեկտրամատակարարում/:
(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)
6. (*) Կից հողամասեր ազգային պարկի հողեր
(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)
7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարժանների տարածքներ (պահպանական գոտիներ) չկան
(հուշարժանի անվանումը, կարգավիճակը և այլն)
8. (*) Հատակագծային սահմանափակումներ չկան
(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

ՆԱԽԱԳՕՍԱՅԻՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ Նախագիծն իրականացնել 22 քաղաքաշինության գործող նորմատիվ պահանջներին համապատասխան: Նախքան նախագծային աշխատանքներն իրականացնել տարածքի երկրաբանական հետազոտություն: Անհրաժեշտության դեպքում նախատեսել մակերևութային և ստորգետնյա ջրերի հեռացման ցանցեր: Կառուցապատողի տեխնիկական առաջադրանքով նախատեսվում է իրականացնել հանգստի գոտու կառուցապատում, մասնավորապես կառուցել թվով 21 չորս տիպի միահարկ և երկհարկանի բոթեջներ, հյուրանոցային մասնաշենք, ռեստորանային մասնաշենք, վարչական մասնաշենք, լողավազանային մասնաշենք, բաց լողավազան /ջրավազան/, պահակատուն, ավտոկայանատեղի, ցանկապատում, ինժեներական ենթակառուցվածքներ /ենթակայաններ, կաթսայատուն, ռեզերվուարներ/, բարեկարգման տարրեր: Առաջարկվում է նախատեսվող կառույցների ճարտարապետական լուծումներն իրականացնել այնպես, որ լինեն համահունչ և ներդաշնակ գոյություն ունեցող բնությանը և լանդշաֆտին: Բացառել գոյություն ունեցող ծառերի հատումը, բնական ռելիեֆի արհեստական փոփոխությունը: Նախագծով ներկայացնել նաև հողամասի ցանկապատի լուծումները: Վերջինս առաջարկվում է իրականացնել հնարավորինս թափանցիկ օգտագործելով փայտ, մետաղական ցանց, մագլցող խտտաբույսեր կամ թփեր:

(նկնելով 22 օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի որոշումներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից, առաջարկություններ ձևակետերի ձևավորման, տանիքների, արտաքին դռների, պատուհանների համամասնությունների և գունային լուծումների վերաբերյալ)

- 9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր) չի սահմանափակվում
- 9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր) նվազագույնը՝ 3.0մ
- 9.3. թույլատրելի բարձրությունը (մետր) առավելագույնը՝ +12.000
- 9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույց(ներ)ի) 0.4
ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)
- 9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%) ներառյալ բարեկարգումը/ 25%
- 9.6. կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%) ներառյալ բնական լանդշաֆտը/ 75%
- 9.7. այլ պահանջներ _____

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (սպամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը _____

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները չի սահմանափակվում

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ
(Պահանջներ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ)

12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, կցվում է
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. (*) էլեկտրամատակարարում կցվում է
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) գազամատակարարում կցվում է
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը _____
(համաձայն N 1 հավելվածի 58-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված էլակետային տվյալների)

12.5. թույլ հոսանքներ _____

12.6. աղբահանություն _____

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում նախատեսել
(ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում նախատեսել
(լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջներ, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գովազդ և այլն)

15. Ծինարարական նյութեր Արտաքին դիգայնում առաջարկվում է օգտագործել փայտ, բնական ջարդված քարի շարվածք, աղյուս և այլն:

16. Պաշտպանական կառույցներ առաջնորդվել օրենքով սահմանված նորմատիվ-տեխնիկական պահանջներով

(արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)

17. Հակահրդեհային պահանջներ սպահովել ՀՀՇՆ 21-01-2014 Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն նորմերի պահանջները

(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ սպահովել ՀՀՇՆ IV-11.07.01-2006 (ՄՄՆ 3.02-05-2003) «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմերի պահանջները

19. Երջակա միջավայրի պահպանում օրենքով սահմանված կարգով

(շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)

20. Ծինարարության կազմակերպում Շինարարական աշխատանքների իրականացման բնթացքում շրջակա միջավայրը գերծ պահել շինադրի կուտակումից: Հողային հանույթներից առաջացած բնահողը կուտակել համայնքապետարանի կողմից առաջադրված տարածքում՝ հետազայում օգտագործելու նպատակով:

(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, բաղաբային տևտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը մինչև 2023 թվականի հուլիսի 20-ը, Աշխատանքային նախագիծ

ԼԲԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ Նախագծային փաստաթղթերի փորձաքննությունն իրականացնել ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշմամբ սահմանված կարգով:

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում Նախագիծը ենթակա է համաձայնեցման ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ շահագրգիռ մարմինների հետ Եսբիգային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումներ Առկա է Դիլիջանի համայնքի ղեկավարին կից հասարակական հիմունքներով մշտապես գործող Դիլիջանի քաղաքաշինական և ներդրումների խրախուսման խորհրդի ղրական եզրակացությունը:

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումների կամ մասնագիտական եզրակացությունների ստացում Նախագծային փաստաթղթերը ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության

(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ վիագորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում _____

27. Այլ պայմաններ Նախագծային փաստաթղթերի համաձայնեցման և շինարարության թույլտվություն ստանալու նպատակով դիմել Դիլիջանի համայնքապետարան մինչև սույն առաջադրանքի գործողության ժամկետի ավարտը:

Շինարարության ավարտի ժամկետը կնախատեսվի շին.թույլտվությամբ:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

[Signature]
(ստորագրությունը)

Դ.ՄԱՐԳՍՅԱՆ
անունը, ազգանունը



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Սույն վկայականով հաստատվում է 14 հունիսի 2021 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

ԱՐԹՈՒՐ ՏԻԳՐԱՆՅԱՆ ՀՐԱՆՏԻ, ԱՆԻ ԱԲԳԱՐՅԱՆ ՎԱԼԵՆՏԻՆԻ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Տավուշ, համայնք Դիլիջան գյուղ Թեղուտ Պարզ լիճ փողոց թիվ 1 հողամաս

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Անշարժ գույքի առուվաճառքի և գլխավոր վարկային ապահովման հիփոթեքի պայմանագիր՝ 09.06.2021թ. ս/մ 2440

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 11-029-0219-0002

Մակերեսի չափը (հա)՝ 3.03

Նպատակային նշանակությունը՝ հատուկ պահպանվող տարածքների

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հանգստի համար նախատեսված

Գրանցված իրավունքի տեսակը՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 14062021-11-0009, գաղտնաբառ՝ L8EKZAI BT3LN

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ԿԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 14062021-11-0009, գաղտնաբառ՝ L8EKZAIBT3LN

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով



ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ - ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ ՊԱՏՎԵՐ

1.	Նույնացման կոդ	66345111	Ամսաթիվ 14/07/2021			
2.	Ցանց	ԴԻԼԻՋԱՆ	Մասնաճյուղ	«ԱՂԱՏԵՎ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ		
3.	Պատվիրատուի տվյալներ ք. Երևան, Գևորգ Չաուշի փ. 11/1 Հեռախոս 37477 880066B	Կարգավիճակ	Բնակիչ			
		Անվանում	Արթուր Հրանտի Տիգրանյան			
		Անձնագիր	000948760, 012 1/21/2013			
		Սոց. քարտ				
		Ղեկավար				
4.	Էլեկտրասնուցման տարածքի հասցեն	ՀՀ ՏԱՎՈՒՇ, ք. ԴԻԼԻՋԱՆ, ՊԱՐՁ ԼԻՃ փող. 1				
5.	Միացման տեսակ	Ե ո ա Փ ա գ	6.	Համայնք	ԴԻԼԻՋԱՆ	
7.	Պահանջվող հզորություն (ԿՎԱ)	320	8.	Սնուցման տեսակ	Հիմնական սնուցում	
9.	Լարման մակարդակ (ԿՎ)	6	10.	Միացման ամսաթիվ		
11.	Էլեկտրամատակարարման իրականացման տեխնիկական պայմանների առաջարկ					
<p>Էլ. սնուցումը իրականացնել 110/35/6 կՎ "Դիլիջան" ԵԿ-ի 6 կՎ "Մարման կայան" ուղղ. Գ. 8770 ԼՏԵ-ն սնող 6 կՎ մալուխային հատվածից մուտք-էլք սխեմայով կառուցելով 6 կՎ ՄԳ-Կառուցվող 6 կՎ ՄԳ-ի սկզբում տեղադրել Գ. 8770 ԼՏԵ-ի մուտքը և կառուցվող 6 կՎ ՄԳ-ի էլքը ապահովող սարքավորումներ: Կառուցվող 6 կՎ ՄԳ-ի վերջում, սպառողի կողմից տեղադրել 400 ԿՎա հզոր. փակ տիպի ԼՏԵ: Հաշվառքի սարքերը տեղադրել ԼՏԵ-ի ցլ. կողմում: Անվտանգության գոտիների խախտում չկա: Էլ. սնուցվող տարածքը գտնվում է համայնքի վարչական սահմանում բնակավայրից դուրս: Տվյալ տարածքում էՄՀՀ համակարգը դեռ չի գործում: 6 կՎ ՄԳ-ի գծի 00608544</p>						
<p>Անհրաժեշտ փաստաթղթերը ստուգեց և պատվերն ընդունեց _____ / Գ. Երիցյան /</p> <p>Տեխնիկական պայմանների առաջարկին համաձայն եմ, ծանոթ եմ "Նոր սպառողի" կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման կարգին, որի համար ստորագրում եմ _____ / Արթուր Հրանտի Տիգրանյան /</p> <p>Ցանցի պետ _____ / Գ. Դավթյան /</p>						
<p>Էլեկտրասնուցման վերակառուցվող գծի գույքահամար և անվանում</p>						
12.	00608544	6 կՎ ՕԳ մարման կայան				
<p>Էլեկտրասնուցման կառուցվող գծին տրվող</p>						
13.	Գույքահամար	Անվանում	Տեսակ	Կապակցող խմբի կոդ	Հասցե	ՆՊ

«ԱՂԱՏԵՎ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ԳԼԽԱՎՈՐ ՃԱՐՏԱՐԱԳԵՏ _____ /Ս. ԱԼԻԽԱՆՅԱՆ/

Հաստատել մասնաճյուղի կողմից ներկայացված տեխնիկական պայմանի առաջարկը _____ / _____ /

Պատվիրել անհրաժեշտ նախագծա-նախահաշվային փաստաթղթերը _____

Մերժել ներկայացված առաջարկը _____

Մերժման պատճառները _____

Ներկայացնել նոր առաջարկ _____

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԲԸ _____ /Դ. ԳՐԻԳՈՐՅԱՆ/